1898 ՅՈՒՆՎԱՐԻ 14 (26) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№. 4—ՏԱՍՆԵՒԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 4

1898 ՅՈՒՆՎԱՐԻ 14 (26) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը
Տարեկան գինն է 10 ռուբլի. կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“.
կամ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

[...]նը բաց է ամեն օր 10—1 ժամ [...]ցի կիւրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանզադեանի) և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, ԿԷՍ ՏԱՐԻՆԸ 6 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „АРЦАГАНКЪ“ իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով

ՀԱՅԿԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ
ԱՐՏԻՍՏ. ԱԶՆ. ԹԱՏՐՈՆՈՒՄ
Չորեքշաբթի, յունվ. 14-ին
Հայ թատերական ընկերութիւնն
մասնակցութեամբ թատերասէր պ. ՈԹՈՆԻ
կըներկայացնէ
Ի ՆՊԱՍՏ ՏԻԿ. ԶԱԲԷԼԻ
I
ՄԻ ԿՆՈՋ ՏԱՆՋԱՆՔԸ
Դր. 3 գործ. հեղ. Էմիլ դը-Ժիրարդէնի. Թարգմ. Ար. Յովհաննիսեանի:
II
ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԸ
ԴԺՈԽՔՈՒՄ
Փարս-վոդ. 1 գործ. Գ. Սունդուկեանցի:
Մասնակցում է ամբողջ խումբը: Օսկան Պետրովիչի դերը կը կատարէ պ. Տէր-Դաւթեանց:
ՍԿԻԶԲՆ Է ԺԻՇՏ 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Անտրպրիզ Վ. Լ. ՓՕՐԿԱՏԷՅԻ
Չորեքշաբթի, յունվ. 11-ին
Օպերային արտիստների ընկերութ. կըներկայացնէ
արտիստուհի Գ. Լ. ՇՏՐԷՅԽԵՐԻ երկրորդ դեբիւտի համար
„ՀՐԷՈՒՀԻ“
Մասնակցում են Տ. տ. Շալիրինգ, Տիմանինա, պ.պ. Պերես, Արցիմովիչ, Գալկինկօ, Գեցեվիչ և այլք:
Պարերը կըղեկավարէ պ. Ջովասի, մասնակցութեամբ օր. Լինչեվսկու:
Երաժշտապետ Ի. Գ. Պագանի
Ռէժիսէօր Իվ. Ե. Փիթոյեվ:
ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ
ԱԶԴ —Վաղը «Բօկերս գիտմօր» օպերան: Յունվարի 16-ին արտիստուհի Տ. Մ. Կարէնինա-Գինկուլովայի բենեֆիսին կըներկայացուի «Սնեգուրօչկա» օպերան և «Հենդէլ ու Գրետէլ» օպերայի 3-րդ արարուածը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի պատիւ նախատօնակի անուանակոչութիւն Վեհ. Հայրապետի:
Վեհ. Հայրապետի Ս. Էջմիածնից Տփխիս մեկնելը:
Աւազակութիւնը Կովկասում և պ. Ֆրենկելի պատասխօնութիւնը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ռուսական դեսպանի առաջարկը Հայաստանի մասին: Հայեր կենսաբանացնելու լուրը Կիպրոսում: Յուզումներ հայերի մէջ Կ. Պոլսում: Վանում խիստ անկարգութիւն: Կաթողիկոսական կոնդակ: Իշխ. Գալիցինի Պետերբուրգ գնալը: Կովկասում բացուող բարձր. դպրոցների մասին: Գիւղատնտես. նոր դպրոցներ: Միջոցներ Կովկասում աւազակ. արմատախիլ անելու: Ցօղուտ պօլիտեխնիկումի նոր նշանակած դումար: Մի նոր նաւթ արդիւնաբերային ընկերութիւն: Նուէր յօգուտ Թիւրքահայերի: Նուէր յօգուտ արհեստաւորաց գանձարանի: Սև ծաղիկ համաճարակը: Նամակ խմբագրութեան: Եւլախ կայարանից: Գանձակի նահանգում աւազակութիւնները: Սիմֆերօպօլից: Բամբակի սերմերի բաշխում: Նամակ Բաթումից: Գրական նորութիւններ: Նամակներ Սպանիայից: Քաղաքում:
ՖԷԼԻԵՏՕՆ.— Կիպրոսի ազգային որբանոցը: Անօգուտ գթութիւն:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՊԱՏԻՒ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Տասնեակ տարիներ սորանից առաջ՝ Ամերիկացի ճանապարհորդ Eli Smit Վան քաղաքի ստորագրութեան մէջ, ի Թիւս այլոց, ասում է, որ նոյն տեղի Առաջնորդանիստ Ս. Էջմիածին կամ Ս. Նշան եկեղեցւոյ այն խորանի մօտ, ուր կըպահուէին սուրբ Նշանն Հոփսիմեայ և Գեղարդել սուրբ Նշանն, կախուած կար Ս. Յովհաննու Մկրտչի նկարը, որ մեծ եռանդով պատւում էին ուխտ եկող մանուանդ՝ Վանայ հայ կանայք: Այդ չքնաղ, Թէև ժամանակից և ծուխից ժանգ առած պատկերը, յիշեցնում է ինձ, ասում է նա, Մուրիլյօյի Մադրիտում եղած Ս. Յովհաննու Մկրտչի նկարը, որ այնքան համբաւ ունէ գեղարուեստի պատմութեան մէջ: Սակայն, աւելացնում է նա, Վանայ յիշեալ պատկերը Մուրիլյօյի բուն ընդօրինակութիւնը չէ: Ընդհակառակն, համաձայն Քրիստոնէական հինաւուրց աւանդութեան, որ յիշաշրջուած է Արևմուտքում, այստեղ Ս. Յովհաննէս Մկրտիչը ներկայացրած է ոչ Թէ մանկական հասակում, այլ մի բարձրահասակ, նիհար, Թուխ պատկերով և երկար՝ ուսերքին Թափւող երկար մազերով. նրա խոշոր ու բարի աչքերը ցոլում են դէպի Երկինք, այնտեղէն յոյս և ապաւէն հայցելով. նորա հանդերձն է ըստ Աւետարանի՝ «ի ստեաց ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր», ձեռքին ունէ եղեգնեայ մի խաչ, իսկ մօտը կանգնած է մի հեզ, անմեղ գառնուկ: «Եւ որքան անարատ է և խորհմաստ այս բուն Քրիստոնէութեան աւանդը, որ մեր ժամանակներում այնքան էլ հասկանալի չէ նուրբ ճաշակով պարծեցող լուսաւորեալ աշխարհին», եզրակացնում է հեղինակը:

Եւ յիշելով Վանայ Ս. Էջմիածնի այդ պատկերի նկարագիրը, Վեհիդ Անուանակոչութեան պանծալի տօնիդ նախընթացող օրս մտածութեան մէջ ընկանք:

Արդեօք հոգելոյս մայրդ, ծննդաբերութեան օրերում, Վանայ բարեպաշտ կանանց երամի մէջ յաճախելով յիշեալ Ս. Էջմիածնի եկեղեցին, նոյն պատկերի առաջ ուխտած չէ՞ր, որ իւր արգանդի պտուղը Մկրտիչ կոչուի: Եւ եԹէ Զաքարիայն և Եղիսաբէթ, մարգարէանալով Թէ ինչ դեր պիտի կատարէ իւրեանց մանուկը, պնդեցին՝ «կոչեսցի Յովհաննէս», «Յովհաննէս է անուն դորա», ապա Հայրիկիդ ծնողք, Մկրտիչ Քեզ անուանելով, չգուշակեցին արդեօք, որ նման Ս. Յովհաննու, և Քեզ վիճակուած է լինել «նախաշաւիղ հնաւանդ անճուկ ճանապարհին Նոր Օրինաց, ըստ Առաքելոցն»:

Ապա նախատեսնելով «Ղեւտական քահանայութեանն յԱհարովնէ ի Քեզ կատարումն» Դու, Հայրիկ, ընդօրինակելով ի Քեզ մորդ սիրած և յարգած Վանայ յիշեալ պատկերը, խաչ ի ձեռդ առար, աչքերդ Երկինք ցոլացուցիր և անմեղ գառնուկ միշտ օրինակ ընկեր Քեզ պահելով, մտար աշխարհ «Ձայն բարբառոյ յանապատի» հընչեցնելու: Սակայն կըգգայիր և կը նախատեսէիր արդեօք, որ ինչպէս մեզմէ այսօր ճիշդ 700 տարի առաջ ապրող Գրիգոր Սկեւռացին ի պատիւ Ս. Յովհաննու Մկրտչի երգած «Արեգական արդարութեան» պատուական շարականի մէջ ասում է. «. . .զՔեզ որ խայտալով ծնար տատրակդ անապատի, կաքաւելով խնդրեաց ի մահ դուստր Հերովդիադայ...»:

Մօտ 50 տարի զեգերեցիր Դու և ոչ մի ժամ հանգիստ ունենալով, այլ յանուն Քո պաշտած Եկեղեցւոյ, Քո սիրած ազգիդ և հօտի՝ միշտ ծանր Խաչ կրեցիր և երբէք չվերացուցիր ուսերիցդ այդ ծանր խաչը...

Եւ հայ ազգը երախտապարտ սիրոյ զգացմամբ հրաւիրեց իւր Հայրիկին բազմիլ Ս. Լուսաւորչայ Գահին վրայ և հովանաւորութեամբ Ռուսիոյ մեծազօր տէրութեան և օրինաց պաշտպանութեան՝ առնել իւր ձեռքի մէջ վարչութեան ղեկը և գայիսոնը...

XIX դարը սպառում է աճ և մենք գրեԹէ XX դարու նախադուռն ենք հասած. . .: Որքան որ պաշտելի է մեզ Ս. Աւետարանը, բայց քանի որ աշխարհիս վրայ տակաւին չէ ըմբռնուած նորա խոր իմաստը, ներում ենք մեզ կարծել, որ երբեմնայէս պարտուպատշաճ է դառնալ նաև Սաղմոսի և Հին կտակարանի կտրուկ տողերին...:

Բարեմաղթելով Սրբազնագոյն Հայրիկիդ երկար և անվրդով կեանք առ ի առաջնորդել մեզ դէպի բարին, և կանխապէս գալով յողջոյն Մեծի Վեհիդ, սոյն օրուայ նախատօնակին և մենք երգեմք ընդ Սկեւռացոյն. «Փութացիր մեզ յօգնութիւն առ ի վերուստ սուրբ Յովհաննէս առաքեալ եւ մարգարէ եւ Կարապետ եւ Մկրտիչ Որդւոյն Աստուծոյ...»:

Աղ. Երիցեանց:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ ՏՓԽԻՍ ՄԵԿՆԵԼԸ *)

Ազգիս Վեհափառ Հայրապետը դեկտեմբերի 24-ին Ս. Էջմիածնից Տփխիս մեկնելիս Իւրեն ներկայացող Ս. Էջմիածնի միաբանութեան մօտաւորապէս հետեւեալն ասաց.

«Ձատ խօսել չեմ կրնար, մի քանի խօսք միայն ըսեմ: Երեկ նստած կխորհէի, որ ես միշտ ձըմեռ ճանապարհ կերթամ. Վանէն Պոլիս, Պոլսէն Վան, Երուսաղէմ եայլն: Մտածեցի Էջմիածին գնալով կըծնեմ ձմեռային ճանապարհորդութենէ, բայց այստեղ ալ նոյն ճակատագիրն է: Օրհնեալ ըլլայ Աստուծոյ կամք, ստիպուած եմ գնալու, իմ վրայ դրուած պարտքը կըկատարեմ. ես պատասխանատու եմ, կուզեմ Էջմիածինը քանի մը տարով յետ տանել:

Գիտեմ շատեր կը բամբասեն, կըսեն որ Հայրիկ եկաւ՝ չպատժեր: Դուք շատերն ունեցեր էք, որ գաւազան ունէին ձեռքերնին, շատերն էլ յետոյ կունենաք. Է Թող

*) Ներկայ Թղթակցութիւնը ուշ հասաւ մեր ձեռքը փոստայի մի Թիւրիմացութեան պատճառով. Ծ. Խ.

ՖԵԼԻԵՏՕՆ

ԿԻՊՐՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՐԲԱՆՈՑԸ

(«Արձագանքի» յատուկ Թղթակցից)

ԼՕՆԴՕՆ, 11-ն յունվարի.

«Արձագանքի» և Թիֆլիզի ուրիշ Թերթերի մէջ լոյս տեսաւ «Կիպրոսի ազգային որբանոցին» օգնելու մի հրաւիրագիր հիմնադրի—Վահան Քիւրչեանի ստորագրութեամբ: Աչքից հեռու այդ հաստատութեան մասին անհրաժեշտ պատճառներ կային հրապարակաւ գրել. այս անգամ այդ դիտաւորութեան գործադրմանը առիթ է ընծայում վերոյիշեալ շրջաբերական հրաւիրագիրը:

Վահան Քիւրչեանին անձամբ ճանաչում եմ, այլ շատ քիչ: Խօսակցութեան մէջ եռանդուն է և կեանքի համար բաւական ճարպիկ: Ուրիշ կամ ընդհանրապէս, սիրում է ճառել իւր անձի կարեւորութեան մասին, իւր խօսակցի վրայ ազդեցութիւն յառաջ բերելու դիտաւորութեամբ: Այս տպաւորութիւնն արած է իմ վրայ 1887-ին. Բայց այսպիսի տպաւորութիւնները շատ անգամ արդարացի չեն լինում. հետեւաբար այսպիսի կողմնակի ծանօԹութիւն բաւական չէ խղճամիտ կարծիք յայտնելու. սակայն կան վաւերական փաստեր: Թէև կալէս չարժէ անձը հրապարակային խնդրի առարկայ դարձնել, այլ որովհետև նորա անձը և «Կիպրոսի Ազգային Որբանոց» ասուածը միևնոյն բաներն են, ուստի ըստ ինքեան անհրաժեշտութիւն է յառաջ գալիս նորանով զբաղուելու:

Կոտորածների հետեւանօք, որպէս ուրիշ տեղերից, նաև Այնթապից շատ գաղթական հայեր կային Եգիպտոս, ամենք յայտնի և յարգուած անձնաւորութիւններ, որոնք ամենքն էլ վերին աստիճան աննպաստ էին խօսում իրանց լաւածանօթ հայրենակից Վահան Քիւրչեանի մասին և յաւելէին յայտնում որ հայրային զգացումների այդ պղտորուած դրութիւնից օգտուելով, Որբանոց հիմնելու պատրուակին տակ, պիտի յաջողէր Եւրոպայում խաբել հայերին դրամ կորզելու. մի ընԹացք որ իւր կեանքում, հասարակ սովորութեանց կարգն է անցել: Թէ այդ հայրենակիցները և Թէ ապա Լօնդոնում նրան ճանաչողները պատմեցին մի շարք աւանտրական աններելի գործողութիւններ, որ կատարած է պ. Քիւրչեան անգլիացի բանկիր Հանալու, կեղծ անունով հնագիտութեան վաճառական ձևանալու մէջ և այլն: Եւ այս ամենի մէջ տարակոյսի տեղիք չկայ:

Իւր մասին այժմ իմ մօտ գտնվում են մի երկու տեղեկագիրներ, ուր ժամանակագրական կարգով յիշատակուած են նորա կեանքի բոլոր խաղերը:

Տեղեկագրողներից մէկը որ անձամբ քննել է Որբանոցի վիճակը, հետեւեալ կերպով է գրում. «...Աստանա, Մերսին, Ալէքսանդրէթ, Ալէքսանդրիա և Գահիրէ շատ բաներ լսելով այդ հաստատութեան խղճալի վիճակին մասին, իմ վրայ պարտականութիւն դրի այս օրերս երԹալ Կիպրոս անձամբ քննելու համար: Սակայն երԹալէս առաջ ի Գահիրէ հանդիպեցայ յիշեալ Որբանոցի անցեալ տարուայ ուսուցիչներէն պ. Մկրտիչ Եղեկէլեանին և երկար ատէն Նիկոսիոյ մէջ բնակած Ալէքսանդրէթցի վաճառական պ. Գեղամ Տէր-Գրիգորեանին. սոցա տուած տեղեկութիւններն շատ ցաւ պատճառելով ինձ, շտապեցի օր առաջ երԹալ ի Նիկոսեա՝ Կիպրոս:

«Կիպրոսի մէջ Ազգային որբանոց հիմնելու և ապագային Աստուածաբանական դպրոցի վերածելով քահանայացու և վարդապետացու պատրաստելու գաղափարը հայկական կոտորածի արդիւնք չէ: Միևնոյն նպատակաւ սակից առաջ մտածուած, խօսուած և անգլիացոց աջակցութիւնը խնդրուած էր. մի քանի երևելի անգլիացիք ալ հանգուցեալ Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսին խոստումներ տուած էին, և այս նպատակաւ ալ մի Կիլիկիացի երիտասարդ Անգլիոյ համալսարաններէն մէկուն մէջ պատրաստուած էր. սակայն այդ տագնապը, կոտորածները, Կաթողիկոսի մահը՝ այս ամենքը արգելք եղան այդ ձեռնարկի գործադրմանը: Վահան Քիւրչեան տեղեակ լինելով այս նպատակին, կոտորածէն յետոյ կըհասկանայ այդ գաղափարէն օգտուելու ժամանակը, և կըյաջողի մասամբ:

Այստեղ յառաջ բերուած են Քիւրչեանի Այնթապի կեանքի դէպքերը, ի մէջ այլոց յիշատակուած է որ 500 ոսկի է փչացրել տեղւոյն ազգային դրամներից, նաև Կ. Պօլսից մոլորեցրել է Այնթապցիներին Թէ հանրային կրթութեան նախարար Մինիֆ փաշայից արտօնութիւն է ստացել է տպարան բանալու և դրա համար յաջողվում է 200 ոսկի առնել իւր Թէ տպարան գնելու համար: «Երբ Այնթապու լուրջ երիտասարդութիւնը երկայն տարիներ հակառակել է, վիճարանել է վերջ Քիւրչեանի անխոնջ ձեռքէն ազգային գործերու ղեկը կառնեն, նա ալ կըհեռանայ հայրենիքէն դէպի Լոնդոն, ուր հաստատուելէն 6 ամիս վերջը իւր անունին մօտ Mr. Curcy կեղծ անուան տակ 3—4 ամիս պայմանաժամերով 20-30-40-50-100-ական ոսկինոց բանկային փոխանակագրեր կըշինէ ու կըղրկէ Այնթապ իւր եղբօրն, նաև կըյաջողի Կ. Պօլիս գործակալ ունենալ և կըգտնէ յանձին մի վանեցի վաճառականի Մէնէվշեան անունով, որ սակայն փոխանակագրեր կեղծ լինելու մասին ո և է գիտակցութիւն չունէր: Այնթապի հայ վաճառականներն պակաս տոկոսով շահուէս կը համարեն գնել, և մինչև որ գործի գոյնը երևան կելնէ 3-4 ամիս յետոյ, արդէն պ. Քիւրչեան կըյաջողի 3500 ոսկի վար գնել: Այնթապի վաճառականներ դատարանին բողոքեցին դրամանենգութեան ամբաստանութեամբ, բայց կերևի իւր բաղդէն, հայկական կոտորածներն սկսելուն հետեւանօք, չկըցան դատին հետևիլ: Կայ նաև մի ուրիշ փաստ, որ ասկէ աւելի ստորնացուցիչ է. 1896 ի գարնան սկիզբը Զէյթունի տագնապի ատեն, պ. Քիւրչեան ազգասիրութենէ մղեալ և խեղճ հայրենակիցներուն (կիլիկեցւոց) օգնութիւն հասցնելու անունով վճռեալ կ'ըլլէ նամակ մը կըգրէ Ալեքսանդրէթ առ Ներսէս վարդապետ Դանիէլեան: Նամակին կըներփակէ 20-40-50-ական ոսկինոց ընկալագրեր և մի քանի հատ ալ չգրուած Թուղթեր, և կըխնդրէ վարդապետէն որ դանոնք ստորագրելով և կնքելով իրան ղրկէ, և ինքն ալ այդ դրամները գանձելուն իսկոյն պիտի յղէ առ Ներսէս վարդապետ, հակառակ պարագային Թուղթերը նոյնութեամբ ետ պիտի դարձնէր: Ներսէս վարդապետ այս Թուղթերը առնելուն պէս, կըդիմէ Ալեքսանդրէթի մի քանի լուրջ ազգայիններուն անոնցմէ խորհուրդ կըհարցնէ, անոնք կըզգուշացնեն «հայր սուրբ զգոյշ եղէք չըլլայ որ ստորագրէք, կըխաբուիք»: Բայց վարդապետը յիշեալ Թղթոց ամենն ալ ստորագրելով և կնքելով ետ կըղարձնէ առ պ. Քիւրչեան: Ամիսներ կանցնին, տարին կըբոլորի. վարդապետը նամակ նամակի ետևէ կըգրէ կամ դրամ կամ ընկալագիրներ ու ստորագրուած անգիր Թուղթերը կըպահանջէ. բայց պատասխանող չըկայ:

Խնդիրը կ'իմացուի վերջերս պատրիարքարանի կողմէ. պատրիարքարանը իւր ըրած հարցումներուն չկըննալով գոհացուցիչ պատասխան առնել վարդապետէն, ղինքը Կ. Պոլիս կըկանչէ և հիմա այդ վարդապետը Պոլիս կըգտնուի»:

Վերոյիշեալ ընԹացքներից յետոյ, պ. Քիւրչեան մի նոր հասցէով և նոր անունով դառնում է հնութիւններ գնող վաճառական: 1896—1897 ի Արևելեան մամուլի մէջ կարելի է տեսնել աչքի զարնող մի ծանուցումն հետեւեալ կերպով:

Օ. ՊԱԼԹԱԶԱՐ
Ի ԼՈՆԴՈՆ

Պատիւ ունի ծանուցանել Թէ, յանձնարարութիւն կ'ընդունի Լոնտոնի հրապարակին վրայ վաճառելու հնութեան վերաբերեալ զանազան նիւԹեր, դրամ, քար, զարդեղէն կամ գործածական առարկայ, ձեռագիր կամ տպեալ գիրք, նկար, նամակադրոշմ եայլն:

Պայմանները՝ որակի և քանակի համեմատ կը տարբերին և կանխաւ Թղթակցութեամբ կ'որոշուին:

Կատարեալ ճշդութիւն: Կարևոր գործողութեանց առԹիւ երաշխաւորութիւն:

Հասցէ O. BALTAZAR 53, Wharton Road West Kensington
LONDON W.

Շատ հնուԹիւններ, հին դրամներ ունեցողներ չլսելով Baltazar անունից և կարծելով որ Զմիւռնիոյ նշանաւոր Baltazar-ներիցն է, խաբվում են այս ծանուցումից, մինչև որ յայտնվում է Թէ այդ O. Baltazar-ը նախկին անգլիացի բանկիր Curcy-ն և ծանօԹ Վահան Քիւրչեանն է:

Որբանոցները այսօր ամենաընտիր պատրուակներ են խաչագողութեան կեղծապարիշտ առաքեալների համար: Այժմ գանք պ. Քիւրչեանի որբանոցին:

Աւիծը և հանգամանքները նպաստեցին Վ. Քիւրչեանի նպատակին. գաղափարին համակիր եղողներ նպաստեցին նրան և անցեալ տարի բացուեց Որբանոցը, որի հոգաբարձութիւնը, ուսուցչական խումբը ամբողջապէս կազմվում է հօրից, եղբայրից, աներձագներից, որոնք ամենք էլ ոչ մէկ պատրաստականութեան տէր չեն այդ գործի համար: Հայրը, որ ամբողջ կեանքում գինեպան է եղել, այժմ այդ Որբանոցի խնամակալն է: Որբանոցի ծախսարարն է Յովհաննէս Քիւրչեան՝ Վահան Քիւրչեանի եղբայրը, որ միանգամայն նորա միջնորդն է եղել կեղծ Curcy բանկերի կեղծ փոխանակագրերի գործում: Ականատես տեղեկագրողը ասում է. «ստ ևս ընտանեօք որբանոցի քսակէն կուտէ, աւելորդ ալ ամսական կ'առնէ: Որբանոցի հոգաբարձութեան մէջ ոչ մէկ կիպրոսցի հայ մասնակցութիւն չունի, և, ի բաց առեալ մի երկու ստորադասեալները, միւս ամենքը Քիւրչեաններ են կամ անոնց մերձաւոր ազգականներ: Վարչական այս խնամիական կազմակերպութեանը յանցանքը կը մեղմանայ եԹէ ի նկատի առնենք Թէ էապէս ինչ է այդ Որբանոց ըսուածը:

«Որբանոց ըսուածը հիմա 27 աշակերտ ունի, բայց չկարծէք որ 27 որբ: Առնենք 10-ը Կիլիկիոյ այլ և այլ կողմէն եկած ծնողաց տէր և Թոշակաւոր են, 8 հատը տեղացի ցորեկօԹիկ են, 4 հատը իբրև որբ Ներսէս վարդապետ Դանիէլեանի ձեռքով Ալեքսանդրէթէն և շրջականերէն ղրկուած ծնողաց տէր, բայց որբ ձևացուցուած. և իսկապէս որբ ըլլալով միայն 5 աղայք կան այդ Որբանոցին մէջ: Ամսական միջին հաշուով 40 անգլիական ոսկի ծախք կը ցուցնեն: 40 ոսկի միայն 5 որբի դաստիարակութեան համար: Կեղծարարութիւն մ'է այս դըպրոցը կոչել «Որբանոց», ուր 27 էն միայն 5-ը որբեր են, իսկ այսօր արդեօք ո՞ր ազգային կամ անհատական դպրոցի մէջ, նոյն համեմատութեամբ, պակաս որբեր կը գտնուին: Ես որքան կըմտաբերեմ, Կեսարիոյ Սուրբ Կարապետ վանքի և Վարագայ վանքի որբանոցներու իւրաքանչիւր որբին համար տարեկան ծախք կըլլնի առ առաւելն 4 օսմ. ոսկի: Մինչ Կիպրոսի այս կեղծ-Որբանոցին համար իւրաքանչիւր որբի տարեկան ծախք որոշուած է 12 անգլիական ոսկի, այսինքն $3^1/_2$ անգամ աւելի ծախք իւրաքանչիւր որբի համար, մինչ Կիպրոս ոչ նուազ աժան է քան Կեսարիա կամ Վան., սակայն և այնպէս այդ 5 որբերն իսկ մինչև

այս մէկն ալ այսպէս ըլլայ: Բայց դաւազանաւ աշխարհի մէջ բան չի լինեք: Պօղոս Առաքեալ կըսէ «Գաւազանաւ եկից առ ձեզ, եթէ սիրով... *).

Գաւազանն աշխարհի մէջ բան չէ բերեր: Աստուած Մովսեսի ձեռքով գաւազան փորձեց Հրէից դէմ, ջարդ ու փշուր արաւ, անհնազանդ ժողովուրդ 40 տարի թափառեցուց, բայց օրհնեալ ըլլայ, տեսաւ որ չի լինի իւր խորհուրդ, իւր կառավարութեան կերպ փոխեց: Քրիստոս եկաւ սէր քարոզելով, այդ սիրով եկայ ես ձեզ մօտ: Ինչպէս որ Աստուած կասէ ձեր սիրոյն ինձ պէտք է տաք, այնպէս ալ մենք մեր սրտերն միմեանց պէտք է տանք, այդ սիրով կապուած լինինք. միաբանութիւն ալլէն անոր համար է, որ սէր իշխէ:

Աղօթեցէք որ ողջամբ գնամ: Անցեալ օր երազ տեսայ, որ մի պառաւ սպիտակ կապոց մը բերաւ. զարթնեցայ. փառչ պառաւ, Հայրիկին պատանքն էր. բայց Հայրիկ կապոցներէ չվախնար, ան Ռափայէլ հրեշտակ երբոր գայ, կերթամ»:

Ապա ներկայացան Նէհափէտին ձեռամբ տեսուչ ուսուցչական խմբով և աշակերտներով: Ճեմարանի յունարէնի ուսուցիչ մեր բանաստեղծ պ. Յովհաննէս Յովհաննիսեանը կարդաց մի կէս ժամ առաջ պատրաստած ողջերթ *):

Վեհափառ Հայրապետը զարկեց մեր շնորհալի բանաստեղծին:

«Բարի ժամու գիտեր ես, աղէկ է, ի հարկէ ոչ անոր համար որ ինձ կըվերաբերէ»:

Աշակերտներին խօսք ուղղելով գովեց աշակերտական կեանքը, երջանիկ կեանք անուանելով:

«Կղզրմանամ. հայրեր, մայրեր, այրի աղքատ կանայք կըլլամն կըլնայրեն, կաղերսեն որ իրենց որդիք ընդունին, ուսում առնեն: Մի ժամանակ այդպէս չէր. կրծեծէին և տղայն ժամկոչին շալակ դնելով դպրոց փախցնէին: Օրհնեալ է Աստուած որ այժմ այդպէս չէ: Ուսմամբ և կրթութեամբ մարդ կատարելի բոյսերէն, անասուններէն: Ես կըփափաքիմ միայն որ հայոց զաւակները ուսման և կրթութեան հետ արհեստ սովորին, փայտ տաշեն, գութան վարեն, կաւն կոփեն, խոփ սրեն: Շնորհակալ եմ ուսուցիչներէն ալ — գիմնազիայի ուսուցիչներին — ձեր պաշտօնն ... է, դուք մի տեսակ արքաշագործող էք. Հոգևոր հովիւներ, քահանաներ, վարդապետներ կայլն, որ ուսուցանող եկեղեցոյ կըկոչուին, քարոզ կտան, բայց ձեզ աշակերտներ, ձեր ուսուցիչներ, այս անվերջ քարոզիչներ ամէն օր կուսուցանեն, կըքարոզեն. Ճեմարանի ուսուցիչներ ընտիր ուսուցիչներ են, հնազանդութեամբ սովորէք. Ճեմարանն իւր օրէնքն ու սահմանադրութիւնն ունի, անոր պիտի հնազանդէք, ուսուցիչներին լսէք: Երբ մենք իւր զաւակ կըլլայ՝ ամեն ինչ կըհոգայ նախօրօք. Ս. Էջմիածին մեծ դերդաստան է, 200-էն աւելի զաւակ ունի. հայ գիւղացին ձեր համար կըհոգայ, ես ալ ձեզ համար կըհոգամ. դէհ գնացէք, օրհնեալ լինիք»:

Սկայ.

29 դեկտ. 1897 թ.
Վաղարշապատ:

*) Ա. Կորնթ. դ. 21.
*) Այդ ողջերթը տպագրուած է «Արձագանքի» 2-դ №-ում:

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ Պ. ՖՐԵՆԿԵԼԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Յունվարի 10-ին կայացաւ Կովկասի իրաւաբանական ընկերութեան նիստը: Այդ նիստումը պ. Ֆրենկելը կարդաց իւր դատախօսութեան վերջը այն միջոցների մասին, որոնցով պէտք է մաքառել աւազակութեան դէմ Անդրկովկասում: Պ. դատախօսը շատ ընդարձակ էր հասկացել իւր դատախօսութեան նիւթը և այնքան միջոցներ թուեց աւազակութեան դէմ, որ մարդս մտքումն անգամ չէ կարող պահել և այդ միջոցների գործադրութիւնը ոչ միայն տասնեակ տարիների, այլ և դարերի գործ է: Ուստի ունկնդիրը չկարողացաւ որոշ գաղափար կազմել, թէ խոսպէս ինչ միջոցներով պէտք է կռուել Կովկասեան աւազակութեան դէմ, որպէսզի օր առաջ անհետանայ կամ չափաւորուի այդ չարիքը մեր երկրում և վերականգնի խաղաղութիւնը, որ այնքան անհրաժեշտ է երկրիս կուլտուրական տարրերի զարգացման համար:

Պ. Ֆրենկելը հետեւեալ միջոցներն է առաջարկում աւազակութեան դէմ. պէտք է աւազակութիւնը հալածելու խնդիրը կենտրոնացնել Կովկասի պ. կառավարչապետի ձեռքում և նահանգապետների ձեռքում (ինչպէս այժմս էլ այդ տեղերում է կենտրոնացած), պէտք է պարբերական խորհրդակցութիւններ կազմել այդ մասին (որ այժմս էլ լինում է), պէտք է առանձին ստորճանաւորներ նշանակել աւազակախմբերը հալածելու համար:

Վերջին միջոցի հետ ոչ մի կերպ չէ կարելի համաձայնել, որովհետև փորձը ցոյց է տալիս, որ աւազակների մասին ճիշդ տեղեկութիւններ կարող է հաւաքել միմիայն տեղական պրիստաւը, որ ամենամերձ յարաբերութիւն ունենալով ժողովրդի հետ, միակ ձեռընհաս անձն է ներկայանում աւազակների դէմ քէշ—շատ յաջողութեամբ մաքառելու համար: Ուրիշ հարց է, թէ ինչպիսի անձնաւորութիւն պիտի լինի տեղական պրիստաւը և այդ պէտք լինին օգնող ոստիկանական տարրերը:

Որովհետև մահմեդական տարրը սիրում է աւազակութիւնը, անբարոյական գործ չէ համարում այդ պարապմունքը ուստի և պաշտպանում է աւազակներին և պարակում նրանց չարագործութիւնները. պէտք է, ասում է պ. Ֆրենկելը, մահմեդական ժողովրդի վրայ ազդել նըրանց հոգևորականների, մոլլաների, դաղիների և մուֆթիների միջոցով: Սակայն մենք հարցնում ենք. ինչո՞վ է հաստատւում, թէ մուսուլման տարրը, ժողովուրդը համակրանք ունի դէպի աւազակութիւնը ով հաստատեց, թէ ինչ տարրերից են կազմում աւազակախմբերը և որքան այդ տարրերը առնչութիւն ունին ժողովրդի հետ: Այդ հարցերին պատասխան չէք գտնի և ոչ մի տեղում, դրանց չէ պատասխանում և պ. Ֆրենկելը: Ով գիտէ, այդ խնդիրների անկողմնակալ հետազօտողը գուցէ այն եզրակացութեան գայ, որ աւազակախմբեր կազմում են մեծաւ մասամբ անգործ բէկերը, նախկին չափարները և սիրիրից փախած եւ առ հասարակ այնպիսի տարրեր, որոնք աւազակաբարոյ դաստիարակութիւն ստանում են ժողովրդի շրջանից դուրս. Ժողովուրդը չէ կարող համակրանք ունենալ և չունի դէպի աւազակութիւնը, որովհետև աւազակութեան ամենամեծ ծանրութիւնը իւր վզին է ընկնում. մի ժողովուրդը կըցանկանայ իւր սեփական ձեռքերով ստեղծել իրան համար այդպիսի չարիք: Ժողովուրդը ատում է աւազակութիւնը. այդ ձեզ կասէ ամեն մի անձ, որ առիթ է ունեցել աչքով տեսնելու աւազակութիւնները և ականջով լսելու ժողովրդի սրտի խորքումը ծածկուած զգացմունքը դէպի աւազակները: Թէ ինչ ձևով է սարքվում աւազակութիւն, այդ հարցին շատ լաւ կարող է պատասխանել Խուլյարեանի գործը: Ժողովուրդը նոյնպէս կարող չէ այդ դէպքում մոլլաների և դաղիների բարոյական խրատներին, որովհետև վերջինները իրանք շատ քիչ բարոյականութիւն ունին. քննեցէք, թէ ինչ դրութեան մէջ է մուսուլման և մուսուլմանուծական խնդիրը մոլլաների և դաղիների ձեռքում, և կըհասկանաք, թէ որքան յոյս կարելի է դնել այդ հոգևորականների բարոյական ազդեցութեան վրայ:

Պէտք է ուսում և կրթութիւն տարածել ասում է պ. Ֆրենկելը, մուսուլմանների մէջ, որ անհեռանալ նրանց դարաւոր աւազակաբարոյութիւնը. պէտք է արհեստներ և գիւղատնտեսութիւն սովորեցնել նրանց: Նկատենք այստեղ որ վերջին ժամանակներին աւազակների մէջ պատահում են գրագէտներ, ուսագէտներ, մինչև անգամ գիմնազիստներ և ռէալական դպրոցների նախկին սաներ: Սակայն այդ միջոցն էլ ըստ երևոյթին չէ ունենում իւր բարերար ազդեցութիւնը:

Հարկաւոր է զինաթափ անել ժողովրդին և խիստ միջոցներ գործ դնել զէնք բերելու և պահելու դէմ: Պէտք է անել որ այն զէնքը, որով կռւում է աւազակը, արագաձիգ հրացանը, այժմս էլ խստիւ արգելուած է: Աւազակները մինչև անգամ չեն էլ գործածում նախկին թուր ու խանչալը. «չախմախլուն» ու «փիստօնլուն» միայն ծիծաղ են յարուցանում նըրանց մէջ: Ուրեմն սովորական զէնքի արգելքը շատ քիչ կարող է օգնել այս դէպքում: Պէտք է ոչնչացնել թամթարաների քոչուորութիւնը, ոչնչացնել հողային անկարգութիւնները և վէճերը, բարւոքել հաղորդակցութեան ճանապարհները... և շատ այդպիսի ընդհանուր և հեռաւոր միջոցներ.

Վերջը պ. Ֆրենկելը արծարծեց իւր նիւթի գլխաւոր կէտը, տեղական ոստիկանութեան դրութիւնը և նրանց անընդունակութիւնը աւազակութեան դէմ մղելու խնդրում: Սակայն այդ կարևոր խնդիրն էլ նոյն ձևով էր արծարծուած, ինչ ձևով և միւս կէտերը, այն է ընդհանուր խորհրդածութիւններով, անգոյն և անշօշափելի ակնարկներով, այնպէս, ինչպէս կարող են երևակայել մարդիկ, որոնք իրանց կեանքում ոչ մի անգամ չեն տեսել տեղական ոստիկանութեան գործունէութիւնը: Ոչ մի շօշափելի յատկութիւն չմերկացրեց տեղական ոստիկանութեան մասին, որ այնպիսի ախորժելի և հակաօրինական ազդեցութիւն է առաջել, ինչպէս, օրինակ, Զանգեզուրի նահանգում և շատ ուրիշ տեղերում: Նոյնպէս պ. դատախօսը չյայտնեց, թէ ինչ հանգամանքների շնորհիւ տեղական ոստիկանութիւնն հասաւ այն դրութեան, որի բարւոքման մասին Զանգեզուրի նահանգապետը պ. Կլեմմը խնդրում էր ժողովրդի լաւագոյն մասի աջակցութիւնը:

N. N.

P. S. Այդ դատախօսութիւնների մասին վիճաբանութեան համար առանձին նիստ կըկայանայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուսական գործակալութիւնը հեռագրում է մեզ.

«Daily News» ին հեռագրում են Կ. Պօլսից, որ ռուսաց դեսպանը կտրուկ առաջարկութիւններ արեց Դուռն Հայաստանի մասին:

* * *

«Freie Osm. Post» թերթը գրում է. «Գերմանական մի լրագրի մէջ տպուած է որ անգլիացիները մեծ ջանք են գործում որքան կարելի է շատ հայ կենտրոնացնել Կիպրոսում: Այդ նպատակով նրանք երկու մեծ ընկերութիւն են կազմել, որոնցից մէկը հաղորդում է տեղեկութիւններ բնակութեան մասին, իսկ միւսը ձեռնարկել է Կիպրոսում աշխատութիւն գտնել հայերի համար: Այս ընկերութիւնը յոյս ունի տեղաւորել Կիպրոսի մէջ 30,000 հայ և երեք չորս տարուայ ընթացքում աւելացնել մինչև 50,000 (գլխաւորապէս ընտանիք) կազմելով երկրագործական գաղութներ»:

Լրագիրը իւր կողմից ասում է որ հաւատալի չեն այդ լուրերը և որ միայն չորս հայեր մի որբանոց են հիմնել կղզու մէջ:

Նոյն թերթին գրում են Կ. Պօլսից. «Այն լուրը թէ Արթին փաշայի եղբօրորդի Դատեան Տրդատը ուղարկուած է Եւրոպա կաշառելու հայ յեղափոխականներին, Կ. Պօլսում մեծ գրգիռ է առաջացրել: Արթին փաշան միշտ խաղացել է ազգային զգացմունքների հետ և աշխատել իրան ժողովրդի բարեկամ ցոյց տալ և դրա համար էլ Դուռը նրան ընտրել էր գործիք, համարելով նրան հայ ժողովրդական մարդ»:

* * *

«Berl. Tagebl. գրում է. — Հայկական շրջաններում նորից սկսել է շարժում հետևեալ պատճառներով. Պատրիարք Օրմանեանը մի ծանուցագիր է տուել սուլթանին հայոց պահանջների վերաբերութեամբ: Սուլթանը, իւր ծննդեան տարեդարձի օրը ընդունելով պատրիարքին, խոստացաւ ի նկատի ունենալ ծանուցագիրը և 3 օրից յետոյ կտրական պատասխան տալ: Բայց մինչև այժմ ոչ մի պատասխան և վախենում են որ օտար ազդեցութիւնները փոխեցին սուլթանի մտադրութիւնը: Ռոդոսթոյից հաղորդում են որ անկարգութիւններ է եղել, բայց յայտնի չէ թէ հայերը մասնակից են թէ ոչ:

* * *

ՎԱՆՈՒՄ խիստ անկարգութիւն է տիրում, որովհետև մի հայ յեղափոխականի գործի համար տեղի ունեցան շատ տների մէջ խուզարկութիւններ և բազմաթիւ ձերբակալութիւններ: Վանի առաջնորդը միջամտեց, բայց անօգուտ և դրա համար էլ հրաժարական տուաւ»:

(«Ռուս. վեդ.»)

* * *

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Միաբանի Մայր Աթոռոյս և նախանդամոյ Ս. Սինոդի Դերապատիւ Տ. Սարգիս Ս. Եպիսկոպոսի խնդալ ի Տէր:

Զբազմաժամանակեայ Ձեր ծառայութիւն ի հոգևոր ասպարէզի և ի կոչման միաբանակցութեան Մայր Աթոռոյս, որով հանդիսացուցեալ կայք գնահատարժան Ձեր պիտանութիւն յօգուտ ազգի և Եկեղեցւոյ Սրբոյ արժանացեալ մեծապոյն շնորհաց և պատւոյ ի Տէր հանգուցեալ նախորդացն Մերոյ և յօրէ անտի իսկ մուտ գործելոյ Մեր ի Մայր Աթոռս տեսաք զանձնանուէր Ձեր վաստակ ի պաշտաման անդամութեան Ս. Սինոդի, թէ որպէս սրտի մտօք վաստակէք յօգուտ իրաւանց և շահուց Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ, որոյ ուխտագիր գինուոր կրեալ էք ի վաղ ժամանակաց հետէ: Եւ զարդիս նկատելով նաև զնորոգ ծանրութիւն պաշտաման Ձերոյ ի նախանդամութեան Սինոդի, Մեք միանգամայն արժանի և վայելուչ իսկ համարեցաք բարձրացուցանել զպատիւ և զաստիճան Ձեր կոչմամբ Արքեպիսկոպոսութեան առ ի փառաւոր կացուցանել զնոր պաշտօն Ձեր, զի յետ այսու աւաւելագոյնս ես ջանալով մեծ հաւատարիմ արդարութեամբ և Աստուածային օրինաց և միանգամայն ճշտութեամբ պահել զհաստատեալ կարգս և օրէնս Վարչութեան Ս. Սինոդի Մայր Աթոռոյս:

Եւ արդ՝ աղօթեմք զի Ամենակալն Փրկիչն զօրացուսցէ զՁեզ և կարողացուսցէ ի Նոր կոչման և պաշտաման Ձերում և դուք կատարելով զեղեալն ի վերայ Ձեր զպարտս արժանասջիք երանաւէտ վարձուց Երկնաւորին, պսակելով յԵրկրաւոր Հովուապետէն:

Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և ի Մէնջ: Ամէն:

ՄԿՐՏԻՉ կաթողիկոս ամենայն Հայոց

Ի 22 Ն դեկտեմբերի 1897 ամի
և ըստ Տոմարիս ՌՅԽԵ
յԱրարատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
'ի Վաղարշապատ:
Համար 1479:

այս աշուն իրենց հայրենի տունէն բերած պատառատուն զգեստներովն էին, և միայն, մօտերս մի-մի ձեռք պարզ հագուստ շինուած է. իւրաքանչիւրը 4-5 շիլինոց (շիլինը 50 կոպէկ է): Աշակերտներուն հետ հաղորդակցութիւն անկարելի է. իրանց ազգականներէն մէկուն հետ անգամ չեն կրնար խօսակցել առանց տեսչի կամ այլոց ներկայութեան. իրենց առ ծնողս գրած նամակները կըքննուին ու այնպէս կըղրկուին եղեր, նոյնպէս եկածները նախ տեսչութեան կողմէ կըբացուին, եթէ յարմար տեսնուին կը տրուին եթէ ոչ՝ ո՛չ: Որբանոցի վարձած շինութիւնը շատ ողորմելի ու անյարմար է. առաջ մաքրութեան հոգ չէր տարուիր, բայց այս վերջերս բաւական հոգ կըտարուի. ես ալ գոհացուցիչ գտայ: Աշակերտներին հետ խիստ վարուիլ, վախեցնել մարմնական պատիժ և ծեծ ահա ինչ որ գոյութիւն ունի այդ դպրոցին մէջ:

«Ահա այն անուանական կեղծ-Որբանոցը որ ես աչքովս տեսայ: Պէտք է գիտենալ որ ես ոչ պ. Քիւրքչեանի ոչ ալ ուրիշներուն դէմ թշնամութիւն ունիմ, գիտենք ալ չէի ճանչնար և այն սաթիւ միայն դէմքերնին տեսնել ու մի քանի բառ փոխանակելու պատւոյն արժանացայ. սակայն տեսածս և լսածս իրողութիւնները պարտք դրին այս տողերը գրելու: Բաւական է խաբուինք այս տեսակ խաբեբաներէն. եթէ ապագային պ. Քիւրքչեան իւր առջի խաղացած դերը հոս ալ խաղալու լինի, ալ մենք գոնէ ինչ ըսելու ենք. ալ մեզ ո՞վ իւր դրամը կուտայ որ կարենանք բարենպատակ հաստատութիւն մըն ալ հիմնել. վերջապէս ի՞նչ մեծ ամօթ է որ առանց գոնէ թեթև քննութեան մը, մեր ձեռնհաս հոգևորականութիւնը իւր կոնդակներով անգիտակից օժանդակ կըդառնայ կեղծարարի մը շահաւէտական դիտաւորութեան»:

Բայց Պ. ... ակնոցը խօսի...

Վաղինակ

ԱՆՕԳՈՒՏ ԳԹՈՒԹԻՒՆ

ՊԻԵՌ ԼՕՏԻԻՑ *)

Բոլորովին կքուած, բոլորովին կորացած, մէջքի վրայ չոր փայտի մի ահագին բեռ, քայլում էր խղճուկ պառաւը լեռնային մի արահետով, աշնանային երեկոյեան վերջալոյսի ժամանակ:

Ամայի տեղ էր, ուր ես հանդիպեցի նրան. ամայի և գեղեցիկ. երազի մէջ տեսնուած դրախտի նման: Սպանիական Պիրենեան լեռների, նրանց կանաչ անտառների մէջ էր: Ամէն կողմից վեհաշուք կատարներ՝ հնադարեա ու անմատչելի, իրանց ծառազարդ հագուստով պարուրուած ու լուռ ձգվում էին մինչև երկնքի անհունութիւնը: Ցածում, հովտի մէջ, հայելու նման ողողուում էր մի գետակ, ցոլացնելով իւր մէջ փեկոնի և պտերի ծառեր, տերևներ ու յամփսեան թարմութիւն: Եւ ծաղիկների գեղեցկութիւնը՝ սառուցներին, փազող ջրերի այդ աշխարհում. մի ինչ որ անթառամ ու վեհ տեսք ունէր. կարծես սպասվում էր թագուհիների կամ պայիկների անցնելուն:

Բայց թշուառ պառաւը, որ ծանր բեռի տակ կքուած քայլում էր, իւր ամպամած աչքերովը չէր նշմարում իրերի սքանչելիքը: Քայլում էր անշուշտ դէպի մի հիւղակ, ուր շատ էլ ուրախութիւնով չէին սպասում նրա վերադարձին. շտապում էր յոգնած քայլերով, գլուխը խոնարհած և ճակատը վշտալից կնճիռներով ակօսած: Եւ որքա՞ն հանգիստ, ճակատագրին հպատակող տեսք, որքա՞ն խոնարհ ու բարի!

Ճանապարհի մի կողմն էր քաշուել քաղաքավարութեամբ, երբ տեսաւ որ ես մօտենում էի. կարծես ուզում էր մի պատկառելի հեռաւորութիւն պահել ինձանից. ինձ մի նշանաւոր անձ էր համարում:

Աստուած իմ, ինչ անել նրան օգնելու համար. այդ համեստ խղճուկ պառաւին:

Եւ երբ ակնարկս նրա բարի հայեացքին հանդիպեց, մի յանկարծական գութ՝ շարժեց սիրտս: Ի՞նչպէս անել՝ նրան աւելի շատորացնելու համար: Մէջքի վրայ բառնած ճիւղերն՝ անշուշտ անարժէք, չնչին բաներ էին և դժուար չէր ասել «Բարի պառաւ, ցած ձգիր այդ բոլորը և ի փոխարէն ընդունիր այս արծաթները»: Սակայն վախենում էի վիրաւորել նրան, քանի որ այնքան նեղութիւն էր կրել այդ փայտի կտորները մէկ-մէկ հաւաքելու:

Որքան զննում էի նրան, այնքան պատկառում էր համարձակութիւնս՝ ողորմութիւն առաջարկելու: Հագուստն էլ մաքուր էր. ըստ երևոյթին մուրացիկ չէր. անշուշտ ո և է գիւղական ընտանիքի տատիկն էր, ո և է դաշտային անյայտ աշխատաւոր, նեղութիւնից ու վշտերից ընկճուած այն մեծ-մայրերից, որոնց մահը իբր փրկութիւն են նկատում կոպիտ գիւղացիք:

Որքան էլ վսեմ էին շարժուածքները, հանգիստ ու երկնային:

Եւ թւում էր որ գտնվում էի վերին—երջանիկ աշխարհներից մէկում, հրանուէտ ժամանակներում:

Հեռու և մօտ, փեկոնի անտառը յարկեր էր կազմում դալար ու միանման, երկնքին մօտեցող պաշտամներից, մինչև խոր անդունդը տարածուող խոտերը, մինչև ջրերն ու ծաղիկները: Մեզնից հեռու շողշողուն գետակը, որ ցոլացնում էր իւր մէջ կատարները, լիքն էր ծաղկեայ կըրդաւկներով. կարծես մանիշակագոյն փընջերով, սիրոյ վարդերով լի կողմներ էր պահում երեսի վրայ և չգիտեմ էլ ինչ մի ջրային բոյսի փնջեր, որոնք համանմանած ալիքաւ ծաղիկներ ունէին:

Եւ ճանապարհի կողքից իսկոյն սկսում էր մամռապատ սքանչելի մի տարածութիւն, որ նման հին աշխարհի հողերին՝ զնում ափավում էր փեկոնների խորհրդաւոր ստուերների տակ, ուր հովիւներն ու հօտն էին միայն առ կոխել և ուր կարծես թզուկային նուրբ գորգեր էին փռուած մեղմութեամբ՝ զալարագեղ գետնի վրայ, հին ժամանակուայ մի անշշուկ խաղաղութեան մէջ...

Բայց այդ դրախտի մէջ ապրող գիւղացիք ոչ տեսնել գիտէին և ո՛չ հասկանալ բոլորը և ծանր բեռան տակ երկաթ եղած պառաւը անհոգ կերպով քայլում էր նրանց միջից այնպէս, որ կարծես թէ անցնում էր քաղաքների անշնորհք և մութ փողոցներով:

Ճանապարհը սկսեց հետզհետէ բարձրանալ, աւելի դժուարանալ. լսեցի թէ ինչպէս թշուառ պառաւը բեռան ծանրութեան տակ հեծեծում էր:

Ի՞նչ անել, ի՞նչ երևակայել նրան օգնելու համար:

Բայց փառք Աստուծոյ, ահա և գիւղը երևաց, երբ ճանապարհը դարձաւ:

Պառաւի գիւղն էր անշուշտ. նրա ճանապարհի վերջը: Յանկարծակի յայտնացող անտառի բարձրութեան վրայ դրուած մի գիւղ էր այդ. հնամաշ, սև, տխուր դանդաղատեսով մի կայտ, որ դարերից ի վեր գուցէ կար այդտեղ և խարխլվում էր անձրևի ու արևի տակ:

Բաւական գուրեկան, հաճելի տեսք ունէր: Սակայն այդ բոլորը, որ միմիայն կարող է օտարների գրաւել, մնում է աննշմարելի տեղացիների համար և այդ գեղեցիկ վայրերը կրում են կեանքի տխուր նշմարներ...

Սկսեցի աւելի հանդարտ քայլել, պառաւից առաջ չանցնելու համար: Գրեթէ նրա հետ էի գնում:

Եւ միասին մտանք այդ մենաւորիկ գիւղը, երեկոյեան պահուն, մեռնող օրուայ ժամանակ, երեկոյեան ժամերգութիւնից քիչ առաջ:

Մի քանի փոքրիկ ու մթին փողոցներ կային, մի երկու փոքրիկ խանութներ, ապա այս—այն կողմ ջրինների համեմատ, նախնական կոշտ ու կոպիտ գործիքներ, յետոյ պատկառելի եկեղեցին իւր գերեզմանատնով, իսկ շրջակայքն ամբողջ՝ անտառային խաղաղ ու անշշուկ մի անդորրութիւն:

—

Ուրեմն պառաւին ոչնչով օգնել չյաջողուեց: Նա շատով մտնել—անհետանալու էր խրճիթներից մէկում և մեկնելու իւր անկիւնում, իսկ միւս առաւօտ վերսկսելու իւր ծեր կեանքը, որ ո՛չ քնքշութիւն և ո՛չ էլ վշտերի ամոքման յոյս է ունենում, մինչև որ մահը գար և ազատէր նրան:

Օ՜հ, թշուառ պառաւ, որ այնքան բարի տեսք ունէիր: Որպիսի՜ գութ էր շարժել իմ մէջ, երբ վերնէջի ժամանակ լսել էի նրա հեծեծանքը!

Բայց ամայի փողոցի ծայրում երևաց յանկարծ մի փոքրիկ մանուկ, որ խաղում էր սև մայթի վրայ և կարծես մէկին էր սպասում: Տեսնելով պառաւին, վազեց դէպի նա: Հէնց որ մօտեցաւ, պարզեց նրան իւր թաթիկներն ու կանչեց.

—Ամօնա! որ բասկերի լեզուով նշանակում է «մեծ-մայր»:

Մի խղճուկ, փոքր, երկու կամ երեք տարեկան ազատ երեխայ էր, բայց նման էր պառաւին. միևնոյն արտայայտութիւնը, միևնոյն համեստ ու բարի հայեացքը: Փոքրի՜կ արարած, որ սկսում էր մի այնպիսի ողորմելի կեանք, որպիսին վերջացնելու մօտ էր իւր մեծ մայրը..

—Ամօնա! (մեծ-մայր)

Եւ պառաւը բաց արաւ գիրկն ու անհուն ուրախութեան շողով վարկենապէս փայլեց դէմքն ու փոխուեց: Ի՞նչ հոգ այլ ևս երկար ճանապարհը, տանջանքը, քանի որ սիրվում էր այդ փոքրիկ արարածից:

Այլ ևս տանջանքի ո՛չ մի ակօս չմնաց պառաւի դէմքի վրայ, ո՛չ էլ յոգնածութեան հեծեծանք մի ժպիտ՝ և ահա փոխուեց ամէն ինչ:

Եւ անշուշտ, գուշակելով իմ գութը, պառաւը դարձրեց աչքերն դէպի ինձ՝ կարծես տեսնելու համար թէ նկատում եմ այդ բոլորը, գիտե՞մ եմ մանուկին. կարծես ուզում էր ասել թէ

—Նայի՛ր մէկ. չէ՞ որ պաշտելի է այս զաւակը և իրաւունք ունիմ նրանով հըպարտանալու. կրկնիր ուրեմն որ ինձ գթալ է հարկաւոր, երբ այսպիսի թոռն ունիմ...

Եւ երբ իմ անօգուտ գթութիւնը հաւանելով հեռանում էի, զանգակատան վերևից հնչեց երեկոյեան ժամերգութեան հանդարտ կոչը:

Պառաւը լսելով ձայնը, կանգ առաւ խաչակնքելու. նրա դէպի գետին խոնարհած դէմքի վրայ երևաց մի խոր, միամիտ հաւատք. այն ճշմարիտ հաւատքը, որ անդրդուելի է մնում թէ ծերութեան և թէ մահուան առաջ:

Օ՜հ, այն ժամանակ. երբ այդ հեռաւոր անտառամիջի խաղաղութիւնը սկսում էր ներհել աշնանային վերջալոյսի մէջ, ես — յաւիտենական թափառող—եկած պարզ ու խաղաղիկ վայրերում գիշերելու, փափագ զգացի խոնարհուել ու մրմնջալ.

—Դու՛ գթա ինձ, բարի պառաւ և աղօթի՛ր հանգստութեանս համար. որովհետև երկուսիցդ ես, ես եմ ամենաթըշուառը, անհանգիստ թշուառը...

Թարգմ. Վ. Փ.

*) „Inutile pitié". par Pierre Loti. „Nouvelle Revue" 15 դեկտեմբերի:

Երկրիս կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գալիցինը փետրվարի 2-ին ուղեւորվում է Պետերբուրգ: Պ. կառավարչապետին կ'ուղեկցէ նրա դիւանի կառավարիչ գաղտնի խորհրդական Միցկեվիչը:

* *

Մօտ օրերս, ինչպէս յսել է «Ռուսկ. Վեդ.», կառավարչական շրջաններում պիտի քննուի Կովկասում մեծ թւով նոր տեխնիքական դպրոցների և բարձրագոյն դպրոցի բացման խնդիրը. Վերջին խնդիրը պիտի քննուի Թիֆլիսի, Վլադիկավկազի, Եկատերինոդարի, Քութայիսի և ուրիշ քաղաքների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Դեռ ևս վերջնականապէս վճռուած չէ թէ Կովկասում ինչպիսի բարձրագոյն դպրոց պիտի բացուի. պօլիտեխնիկում թէ գիւղատնտեսական դպրոց զանազան բաժանմունքներով:

* *

Երկրագործութեան նախարարութիւնը մտադիր է այս տարի գիւղատնտեսական դպրոցներ բանալ զանազան նահանգներում և ի միջի այլոց Բագուի նահանգի Ղուբա քաղաքում:

(«Ռուս. գործ.»)

* *

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ արդարադատութեան և ներքին գործոց նախարարութիւնները, մասնակցութեամբ Կովկասի պ. կառավարչապետի, կքննեն այն խնդիրը, թէ ինչ միջոցների պէտք է ձեռնարկել Կովկասում աւազակութիւնները արմատախիլ անելու համար:

* *

Ամսոյս 12 ին Թիֆլիսի քաղաքային խորհուրդը վճռեց յատկացնել յօգուտ բացուելիք Պօլիտեխնիկումի կրկին տարեկան 30 հազար ռուբլի (բացի առաջուան միանուագ 100 հազար ռուբլուց):

* *

Պետերբուրգում կազմակերպուել է այս օրերս մի նաւթային արդիւնաբերական ընկերութիւն երկու և կէս միլիոն դրամագլխով, որի նպատակն է արդիւնագործել այն նաւթային հողերը, որոնք գտնվում են Նովօրօսսիյսկ քաղաքի մօտ «Կուդակօ» կոչուած կալուածքում: Ընկերութեան հիմնադիրներն են պ. Ղուկասեան, Է. Նօբէլ, Գ. Լիանոզեան և այլք: Կանոնադրութիւնը ստացած է արդէն տէրութեան ի հաստատութիւն:

* *

Այրի Տատարինէ Նաղիևանը նուիրեց „Братская помощь" գրքի խմբագրութեան 100 ռուբլի, խնդրելով գործադրել այդ գումարը յօգուտ Թիւրքիայի հայերի:

* *

Թիֆլիսի վաճառականի այրի տիկին Եղիսաբէթ Բալըեւզարեանը նուիրեց յօգուտ արհեստաւորաց ապահովութեան դանձարանի 300 ռուբլի:

* *

Կովկասում եղած հիւանդութիւնները քիչ էին, այժմ էլ Կուբանի նահանգից Կովկաս է անցել, այսպէս անուանուած սեւ ծաղիկ ռուսկալ համաճարակը, որ այժմ տարածուած է ռազմավիրական ճանապարհի վրայ գտնուած գիւղերում: Ցանկալի է, որ տեղական իշխանութիւնը և բժշկական վարչութիւնն անմիջապէս միջոցներ ձեռք առնեն այդ համաճարակի դէմ, որ անուշադիր մնալով կարող է շուտով անցնել և մեր քաղաքը:

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր,

Խնդրում եմ տեղ տաք այս նամակիս:

Ես մասնաւոր տեղերից իմացայ, որ մեր թատրոնի հովանաւորող տիկ. Սարգսեան, պ.պ. Մելիքեան և Թումանեան, իմ «Տարաւիֆի թաղումն» յօդուածի մէջ, թատրոնական դեկավարների հասցէին գրած նկատողութիւնները, իրանց հասցէին են ընդունել: Սրանով հրապարակօրէն յայտնում եմ, որ այդ նկատողութիւնները նրանց հասցէին չէ, այլ այն յարգելի պարոնների, որոնք անմիջապէս գործ ունէին գերասանների հետ: Տիկ. Սարգսեանը և նրա ընկերները միմիայն շնորհակալութեան արժանի են իրանց գեղեցիկ գործի համար և ոչ նկատողութեան:

Ընդունեցէք և այլն,

Ա. Բալայեան:

12 յունվ. 1898 թ.
Բագու:

* *

ԵՒԼԱԽ կայարանից մեզ գրում են որ ամսոյս 10-ին այնտեղ, հասարակութեան ներկայութեամբ մի սպանութիւն կատարուեց: Մի անյայտ թուրք օգտուելով այն հանգամանքից որ երկաթուղու գնացքը կանգ էր առել կայարանի առաջ և անհոգին բազմութիւն անց ու դարձ էր անում, գնդակահար արաւ պ. Ս. Իղըրչեանի կալուածի կառավարիչ Մաշադի Թայիր Հուսէյնովին և ինքն աներևութացաւ:

* *

Գանձակի նահանգում աւազակութիւնները և սպանութիւնները կրկին վերսկսվում են: «Նով. Օբոզր.»-ի թղթակիցը հաղորդում է թէ դեկտեմբերի վերջերին և յունուարի սկզբներին մի շարք յանցանքներ են գործուել յիշեալ նահանգում: Չէկամի բանտից այս օրերս փախել են քննութեան ենթարկուած 7 բանտարկեալներ, մի քանի օր յետոյ երեք սպանութիւններ կատարուեցին, երկուսը քաղաքում և մէկը երկաթուղու կայարանում: Յունուարի 7-ին, օր ցերեկով քաղաքային հրապարակի վրայ վիրաւորեցին մի ոմն Իբրահիմի, մի չնչին պատճառով հայրն:

Վերջին օրերս Գանձակում դոհեր են տանում ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւնները:

* *

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են.—«Արձագանքի» ընթերցողներին յայտնի է, որ տեղումս անցեալ տարուայ վերջերը կազմակերպուեց աղքատաց հոգաբարձութիւն, որպիսի հոգաբարձութեան կանոնադրութիւնը հաստատուած է տէրութիւնից: Աղքատաց հոգաբարձութեան մի աջակից մարմին կանանց շրջանում ստեղծելու և կազմակերպելու համար, Գեր. Խորէն եպիսկոպոս Ստեփանէն յունվարի 2-ին մի ժողով գումարեց, ուր հրաւիրուած էին տեղիս պատուաւոր տիկնայք և օրիորդներ: Գեր. Հ. Խորէնը, պարզելով նրանց իրանցից աղքատաց հոգաբարձութեան մի աջակից մարմին—կանանց մի մասնաժողով ընտրելու կարևորութեան մասին, առաջարկեց ընտրել 7 անդամուհիներ և նրանց փոխանդամուհիներ: Ժողովը որոշեց ընտրութիւնը թերթիկներով կատարել: Թերթիկներով անդամուհիներ ընտրուեցան տիկին տիկին Քուչնարեան, Պապեան, Յ. Թոփալեան, Սեֆերեան, Քեհըլեան, Ա. Զաքեան, օր. Դոմբիլեան, փոխանդամուհիներ՝ տ. Խանճեան, օր. Ասմայեան, տ. Քեթաբչեան, օր. Քեթաբչեան: Բացի անդամուհիներից և սրանց փոխանդամուհիներից, ժողովը որոշեց ունենալ 3 հատ էլ պատուաւոր անդամուհիներ: Ընտրուած անձինք իրանց առաջին նիստն ունեցան, ուր իրանցից քուէարկութեամբ նախագահուհի ընտրեցին տ. Քուչնարեանին, գանձապահուհի տ. Թոփալեանին և քարտուղարուհի օր. Դոմբիլեանին:

* *

ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Երկրագործութեան նախարարութեան կարգադրութեամբ բերուելու է Անդր-Կասպեան շրջանից վեց վագոն (3600 փութ) ամերիկական տեսակի բամբակի սերմ, որ պէտք է բաժանուի ժողովրդին ձրի կամ չնչին գնով, գլխաւորապէս Գանձակի և Բագուի նահանգներում, ուր գիւղատնտեսութեան այս ճիւղը սկսել է մեծ յառաջադիմութիւն անել, բայց սերմի պակասութեան պատճառաւ ժողովուրդը նեղ դրութեան մէջ է:

Յիշեալ բամբակի սերմից, ինչպէս տեղեկացանք այս գործի կարգադրիչ պ. Տարասինովից, մի վագոն (600 փութ) պէտք է ուղարկուի Երեւանի նահանգը: Յայտնի է, որ այս նահանգում բամբակի մշակութիւնը սկսուել է շատ հին ժամանակներից և այստեղ մի տեսակ բամբակ միայն կար «Կարա-Կօզայ» անունով: Իսկ յիսունական թուականների վերջերում երևան եկաւ և ամերիկական տեսակի բամբակ, որ աւելի լաւն է իւր յատկութիւններով և գնահատվում է «Կարակօզայ» տեսակից աւելի բարձր: Այս էր ահա պատճառը, որ ժողովուրդը սկսեց գերադասել ամերիկական տեսակը և այժմ «Կարա-կօզան» շատ քիչ են մշակում, բայց տարիների ընթացքում ամերիկայի տեսակ բամբակը զանազան ազդեցութեանց ներքոյ սկսեց փոխուիլ: Սկզբում թուփը բարձր էր լինում և շատ պտղատու էր, իսկ այժմ թուփը փոքրացել է և բերքը պակասել: Յայտնի է որ տարբերակեալ բոյսի յատկութիւնները պահպանելու համար հարկաւոր է ժամանակ առ ժամանակ սերմը թարմացնել, առաւել ևս այս միտումով պէտք է գործադրել այն բոյսերի վերաբերմամբ, որոնք մշակվում են: Գլխաւորապէս այս նպատակով պ. Տարասինովը մտադիր է յիշեալ բամբակի սերմից ուղարկել և Երեւանի նահանգը, որտեղ սերմի պակասութիւն չի զգում ժողովուրդը. յիշեալ կարգադրութիւնն մեծ նշանակութիւն կունենայ Երեւանի նահանգին նկատմամբ որովհետև միայն այս ճանապարհով կարելի է բարձրացնել բամբակի բերքը և յատկութիւնները: Մեր կողմից միայն խորհուրդ կտանք, որ ժողովուրդը օգուտ քաղէ այս դէպքից և աշխատէ փոխել իւր արդէն փոխուած ամերիկայի տեսակ բամբակի սերմը, իսկ պ. Տարասինովին կառաջարկէինք աշխատել նահանգի ամեն մասերում բաշխել այս սերմը:

Ս. Զելինսկի:

* *

ԲԱԹՈՒՄ 9 յունվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Անցեալ դեկտեմբերի 29-ին տեղոյս նորընտիր երեցփոխ պ. Ս. Յարութիւնեանը ժողովրդի խնդրանօք ուղեւորուեց Թիֆլիս՝ Վեհափառ Հայրիկից խնդրելու, որ արժ. Մեսրոպ քահանայ Մելեանին և Կարապետ քահանայ Մալխասեանին Բաթումի համար մշտական քահանաներ հաստատէ, պարոնը ներկայացնելով ծխականների օրինաւոր համախօսականը, խնդրել է նաև որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճի հրամայել հայր Մելեանին, որ մինչև Ջրօրհնեաց տօնը գանուի Բաթում: Վեհափառը խոստացել էր անպատճառ ուղարկել և հրամայել էր քարտուղարին հարկաւոր թղթերը պատրաստել. բայց մինչև այսօր նշանակուած քահանաները չեկան. ժողովուրդն սպասում էր որ գոնէ ճրագալոյցի գիշերը կգան, բայց յանկարծ Հայր Մելեանից հեռագիր է ստացվում թէ «դեռ հրամանը չեմ ստացել, ուրեմն անկարելի է գալ»: Ինչպէս ամենքի համար էլ անբացատրելի և մութը հարց մնաց թէ ինչու քահանային գալու հրաման չեն տուել, քանի որ Վեհափառ Հայրիկը խոստացել էր և հրամայել: Տեղս գտնվում է Փոթիի նախկին քահանայ արժանապատիւ հայր Խուդեանը, որ (կարծեմ) դեկտեմբերի 20-ին, հրամանը ձեռքին եկել է ժամանակաւորապէս հովուելու: Երկրին մութը բան. եթէ Վեհափառ Հայրիկը, Մալխասեան քահանային ուղարկել է ժամանակաւորապէս հովուելու, հապա էլ ինչու մի ուրիշն էլ ուղարկում են կոնսիստորիայից, որ ամենի հարցին այս է պատասխանում. «ես եկել եմ, բայց հակառակ իմ կամացս միայն հրամանը յարգելով, բայց որովհետև ժողովրդի մի մասն էլ ինձ է ցանկանում, հետևաբար պէտք է մնամ». հապա էլ ուր մնաց ընտրութիւնների օրինաւորութիւնը: Քահանաներն ընտրվում են ժողովրդից ծխական ժողովներում, ոչ թէ ծածուկ օդաներում, ուրեմն ժողովրդի մէջ երկպառակութիւններ ձգելու տեղ՝ տէր հայրը լաւ կանէր եթէ ժողովրդի մէջ դժուութիւններ ձգելու տեղ չդառնար և հեռանար:

Առօրեայ նորութիւններից առաջինը կարելի է համարել տեղոյս նաւթագործարանատէր Սայեաղ Ջահրաղեանի սնանկ հրատարակուիլը. դեռ պարտատէրհակը հաղիւ էր հասել նոտարի մօտ, որ լուրը կայծակի արագութեամբ տարածուեց. բայց ի հարկէ ճշտութիւնը ստուգելու համար մինչև օրս ոչինչ չըգրեցի, բայց հիմայ պարզ է: Տեղական բանկերի կառավարիչները արդէն չփոթուել են, մէկը միւսի ետևից վազում են գործարան. բայց ինչ, գործարանում ոչինչ չկայ, բացի չոր ու ցամաք պատերից: Թիֆլիսի առևտրական բանկից քննիչներ են, որ վազում են մէկը միւսի ետևից: Առաջին պարտատէրհակը նոտարի մօտ ուղարկելուց մի օր յետոյ, գործարանի աշխատանքը դադարեցրին, և մնացած ապրանքները փակեցին պահեստներում, բայց այս քանի օրս գործարանի ինչ եղած չեղածը քննելու ժամանակ երևաց, որ ոչինչ չկայ. բանկի կառավարիչներից մէկի հարցին թէ «ուր է ցուցակագրած մնացած ապրանքը և կամ եթէ տարել էք՝ ինչ իրաւունքով մեր փակած դռները բացել էք», գործարանի գործակատարը պատասխանել է թէ «այդ հարցերը կարող էք գործարանատիրոջը տալ, գործարանը իմը չէ, որ ես պատասխանատու լինեմ»: Ինքը Սայեաղ Ջահրաղեանը անցեալ դեկտեմբերի 29-ից այստեղ չէ, ուր լինելը ոչ ոք չգիտէ:

Ամսոյս 3-ից լուր տարածուեց թէ նաւթագործարանատէրերից մէկնէլ սնանկացաւ. բայց սրա սնանկութիւնն ուրիշ տեսակ է: 1880 թուականից երբ նաւթային գործերը դեռ նոր էին սկսվում այստեղ, եղբ. Նօբէլ և Բօտշիլդից յետոյ, առաջին տեղը բռնում էր Բիբինէր և ընկ. ֆիրման, որ մինչև Ա. Մանթաշեանի և եղբ. Ծովեանեանի գործարան բացելը, բաւական արագ քայլերով առաջ էր գընում, բայց յետոյ կամաց կամաց նուազելով մինչև այն տեղը հասաւ, որ իւր պարտքի տեղ գործարանը յանձնեց եղբ. Նօբէլ և ընկ. իսկ ինքը եղաւ լոկ կառավարիչ: Վերջին ժամանակները իւր մասնաւոր հանքային գործերի համար գանուելով Պետերբուրգ, ասում են որ կրկին անյաջողութեան է հանդիպել և անձնասպանութիւն է գործել:

Տեղոյս հայ թատերասէրները պատրաստվում են բարեկենդանին մի ներկայացում տալու, կարծեմ յօգուտ Մոսկվայի չքաւոր ուսանողների: Գովելի է մեր թատերասէրների եռանդը և տոկունութիւնը, որոնք իրանց անձնական ցաւ ու դարդը թողնելով՝ ձեռք ձեռքի տուած աշխատում են հասարակական ամեն մի բարի գործի համար: Խումբը կազմակերպուելուց յետոյ, նոր բեմերաուար են պատրաստում, և մտադիր են այս տարուան ընթացքում 5—6 ներկայացում տալ:

Ամսոյս 4-ին նաւահանգստում ծովի սաստիկ ալեկոծուած ժամանակ, քամին կոտրելով մի առագաստաւոր նաւի շղթան, քշելով տանում է մինչև նաւահանգստի միւս պատը, և այնպիսի ուժով խփում է պատին, որ նաւի յետին մասը բոլորովին ջարդվում է. նաւապետը և նաւաստիները հազիւ կարողանում են ազատուել, բայց նաւը ընկղմում է: Նաւը բարձած էր նաւթի սնդուկներով, եղբ. Ծովեանեանի գործարանից և ապահովեցրած էր. խորտակուած տեղը ահագին քանակութեամբ նաւակներ են պտտում, որոնք հանում են ծովի տակից մէկ մէկ դուրս ընկնող սնդուկները: Նաւթի գործարանները շատ դանդաղ են աշխատում, գործարանների պահեստները համարեա բոլորին էլ լիքն են բացի Մանթաշեանից, որ այս քանի օրը կբացուի:

Նաւաստի:

* *

ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս օրերը լոյս է տեսնելու անցեալ տարի վախճանուած գեներալ-լէյտենանտ Ստեփաննոս Քիշմիշեանի մի պատմական աշխատասիրութիւնը «Послѣднія годы грузинскаго царства» (Վրաց թագաւորութեան վերջին տարիները) վերնագրով: Այդ աշխատասիրութիւնը հեղինակը չէր վերջացրել և բովանդակում է Իրակլի II վրաց նախավերջին թագաւորի թագաւորութեան շրջանը:

—

Ալֆօնս Դօդէն թողել է բազմաթիւ անտպագիր երկեր և ի միջի այլոց մի վերջացրած րօման «Quinze ans de mariage». բացի այս իւր «Soutien de famille» վէպից նա կազմել է մի կոմեդիա: Բացի այս նրա թղթերի մէջ գտնվում են շատ գրական հատուածներ, վէպիկներ և յիշատակարաններ, որոնք մօտիկ ապագայում լոյս կտեսնեն նրա նամակագրութեան հետ միասին: Սակայն Դօդէի ամենաթանկագին գրականական ժառանգութիւնը համարվում է մի գիրք որի մասին արդէն շատ տարի է որ խօսում էր և որ կրում է «Ma douleur» վերնագիրը:

—

Այս օրերս տէրութիւնը թոյլատրել է հետեւեալ պարբերական հանդէսների հրատարակութիւնը. Պետերբուրգում—տիկին Պեչկօվա—Տօլիվերօվայի «Женское дѣло» (տարին 9 անգամ), — սպայների սնտեսական ընկերութեան վարչութեան «Листокъ эконом. общества офицеровъ гвард. штаба» (ամիսը 2 անգամ) և պ. Լվովին «прейсъ-курантъ С. Петербурга» ամենօրեայ թերթը: Մոսկվայում—պ. Սվեչնիկովին «Народное благо» ամսագիրը. Վարշավայում—պաստօր Բուրշէին Լեհերէն լեզուով «Zwiastun ewangeliczny» ամսագիրը. Օդեսայում—պ. Մելնիկովին «Технологъ» ամսագիրը. Ռիգայում պ. Ֆօն-Զիւէրին «Прибалтійское право» ամսագիրը. Օմսկում—տեղական թեմական իշխանութեան «Омскія епархіальныя вѣдомости». Պլօցկում պ. Գրաբօվսկուն «Echo Plockie i Lomzynskie» թերթը (շաբաթը 2 անգամ) և Վլօցլավսկում—պ. Անտօնևիչ քահանային լեհերէն լեզուով «Homyletika» ամսագիրը:

* *

ԱՂԴԱՄՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

Զինուորական դատարանը իւր վճիռը յայտնեց, արդարացնելով պ. Յ. Խուրլաբեանին իւր վրայ բարդած մեղադրանքներից: Ճշմարտութիւնը վերականգնուած է և հասարակութեան արդար, անկողմնակալ ցանկութիւնը կատարուած: Այժմ, որ կիրքերը հանդարտուած են և արդարութիւնը կանգնած իւր բարձրութեան վրայ, թէև խիղճն չարագործները դեռ ևս արժանի պատիժ չստացած, աւելորդ չենք համարում մի փոքրիկ դէպք պատմել որպէս ակնատես:

1895 թուի գարնան վերջ՝ ... Խանքենդումն էի, ամառային արձակուրդների արդէն սկսուած էին. սակայն Խանքենդու գեղարուեստական շրջակայքը և անուշաբոյր օդը չէր թողնում շուտով հեռանալու այնտեղից: Գեղեցիկ է մանաւանդ զօրանոցների առաջ ձգուած ծառուղին որտեղ անց էի կացնում օրուայ մեծ մասը: Առաւօտ էր, մօտաւորապէս ժամի 7-ը: Զբօսնում էի սովորական տեղում, երբ հեռուից տեսայ քննիչ պ. Լանեակինին, որ շտապ-շտապ իւր բնակարանից գալիս էր: Նա հասնելով ծառուղու մօտ, կանչեց այդ ժամանակուայ Շուշու I. մասի պրիստաւ Թէյմուր-բէկին և, ինչպէս ձեռերից երեւում էր, յուզուած մի լուր էր յայտնում, իսկ Թէմուր-բէկը հանգիստ լսում էր:

—Շուտով ձիդ հեծիր, եկ, ես գնում եմ, բարձր ձայնով ասաց քննիչը և հեռացաւ:

Իսկ պրիստաւը ժպտալով հեռացաւ իւր տունը: Ես ոչ մի բանից տեղեկութիւն չունէի: Վերադարձայ տուն: Մէկ էլ տեսնեմ առաւ տանտիրուհին մտաւ բակը լաց լինելով:

—Ахъ, Господи! (Ախ, Աստուած) հառաչում էր խեղճը:

Ես, կարծելով, որ նրան մի դժբախտութիւն է պատահել, դուրս եկայ սենեակից և հարցրի պատճառը:

—Охъ, баринъ, бѣднаго Керимъ-бека убили, Агалара убили, завтра, вѣроятно, и насъ убьютъ. (Ախ, պարոն, խեղճ Քերիմ բէգին սպանեցին, Աղալարին սպանեցին, վաղը երևի մեզ էլ կըսպանեն):

—А кто убилъ? Не знаете Вы? (Իսկ ով սպանեց, չգիտէք):

—Всадники, говорятъ, всадники убили, (չափարները, ասում են, չափարները սպանեցին) ցածր ձայնով պատասխանեց տանտիրուհին և դարձաւ հառաչեց:

—Баринъ, пожалуйста, никому не говорите! (Պարոն, խնդրեմ ոչ ոքին չասէք), ասաց նա ու հեռացաւ:

Սպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածուել էր Խանքենդում և ամեն մէկը պատմում էր իւր ցանկացած յաւելումներով: Կէսօրուայ մօտ էր, երբ քննիչ Լանեակինի ծառայ Աֆանասին և Աղդամի բանտի վերակացու փիրուար Եգնեից Նաւօղնովը եկան: Պրիստաւը նրանց ճանապարհին էր պատահել:

Վիրաւորուած Եգնեից Նաւօղնովը պատմեց բոլոր պատահածները այնպէս, ինչպէս գրուել էր լրագիրներում, աւելացնելով, որ, թէև ոճրագործները աշխատել էին փոխել իրանց դէմքը, սակայն նա լաւ ճանաչեց մի քանիսին, իսկ անունները տալ չի կարող. հետեւեալ օրն էլ բերին սպանուած Աղալարի դիակը: Բժիշկը եկեղեցում պէտք է դիտէր և արձանագրութիւն կազմէր: Սրտաճմլիկ էր տեսարանը. Մօտաւորապէս 22 տարեկան գեղեցկադէմ, առոյգ երիտասարդը ընկած էր անշունչ ու այլանդակուած գանգի ոսկորներն էին մնացել. Հօրեղբայրն էր, կարծեմ, պատուհանից տեսնելով գնդակների հասցրած վէրքերը, ուշաթափ ընկաւ եկեղեցու պատի տակ:

Երկու տարի է անցել այդ օրից, բայց դեռ ևս ոճրագործները իրանց արժանի պատիժը չեն ստացել ի ճշգիւ ապացուցուած չէ, թէ ով ինչ մասնակցութիւն է ունեցել:

Պ. Յ. Խուրլաբեանի ձերբակալուելով, հասարակութեան ուշադրութիւնը կենդրոնացած էր միայն նրա աղաման վըրայ: Այժմ, որ կատարուեց նրա ցանկութիւնը, ամենքը սպասում են իսկական չարագործների պատժին:

Սակայն ինչ եղաւ Եգնեից Նաւօղնովը, նա, որ ամենից լաւ էր ճանաչում չարագործներին, որպէս Աղդամում երկար ժամանակ ապրած:

Նրա հետ ես ծանօթ էի. երբ հետաքրքրութեամբ հարցնում էի աւազակների անունները, նա լռում էր կենում այդ մասին, յայտնելով, որ չի կարող ասել, որովհետև նրանց արդարադատութեան ձեռքը մատնելուց յետոյ, ինքը չի կարող ապրել շրջել, շատ յայտնի պատճառներով:

Զինուորական դատարանի գալուց մի քանի օր առաջ, նրան Շուշում տեսայ. այնուհետև նա չկար, և մինչև այժմ էլ չկայ:

Անմեղների արիւնը արդարութիւն է պահանջում. նրանց արիւնաթաթախ, գնդակներով ծակծկուած դիակները մինչև այժմ էլ բողոքում են երկնքի առաջ մարդկանց ոճրագործութեան, ճշմարտութիւնը կոխոտելուն դէմ. .

Սուրէն:

9 ն յունուարի 1898 թ.
Շուշի:

* *

ՆԱՄԱԿՆԵՐ ՍՊԱՆԻԱՅԻՑ

„Auch! ich in Arkadien"!
Goette

III

Գրանադան ոչ միայն սպանիական թագի ամենագեղեցիկ գոհարներից մէկն է, այլ նոյն իսկ ամբողջ աշխարհում չունի իրեն մրցակից, անման Ալհամբրայի շնորհիւ:

Քաղաքի կենտրոնը կազմում է «Puerta real» (արքայական դուռն) կոչուած ընդարձակ հրապարակը, որտեղ, ինչպէս և նորա անունը ցոյց է տալիս, երբեմն մի յաղթական կամար էր կանգնեցրած եղել: Այս հրապարակի վրայ են գտնվում բոլոր առաջնակարգ հիւրանոցները, բանկերը և խանութները. այստեղից սկսվում են բոլոր, քիչ թէ շատ, նշանաւոր փողոցները ու, մերթ սարը բարձրանալով, մերթ գետի ափը իջնելով, ճիւղաւորվում են անթիւ ծուռ ու նեղ մանր փողոցներ, որոնք դեռ կրում են իրանց նախկին արաբական—մաւրական տիպը և որտեղից անդադար հրաշալի տեսարաններ են բացվում դէպի Ալհամբրան ու Սիերրայ Նեվադան: Մանաւանդ գեղեցիկ են այստեղ, սանդուղքի աստիճանների պէս, իրար վրայից բարձրացող տափակակտուր տները, որոնց պատշգամբները գեղեցիկ ծաղիկներով են զարդարուած: Բակերի պատից բարձրանում են նռենիների ու արմաւենիների գագաթները և դուրս են կախվում, հասած պտուղներից ծանրացած նարնջենիների ճիւղերը: Այդ, զօրեղ արևով լուսաւորուած, փայլուն պատկերի տպաւորութիւնը ուժեղացնում է մութ կապոյտ, ասես ամենանուրբ մետաքսեայ գործած, երկնակամարը. տեսարանը կախարդական է... Առաջին օրը շատ զարմանալի է թւում, թէ ինչպէս կարողանում են տեղացիք այդքան անտարբերութեամբ մօտովն անցնել առանց զմայլելու:

Երեկոյեան, երբ Սիէրրա Նեվադայի գագաթները կարմրում են իջնող արևի լոյսից, իսկ ներքեւում արդէն մութը ընկնում է իջնել, քաղաքի բոլոր ծայրերում լսվում է հովիւների երգը, որոնք տուն են վերադառնում այծերը առաջը գցած:

Զարմանալի է այստեղ կաթ ծախելու ձևը. հովիւը մի տաս—տասնեհինգ այծեր առաջը գցած՝ շրջում է փողոցներով տնից տուն, խանութից խանութ ու ցանկացողին դրան առաջ կթում ու տալիս է. ուրեմն խելօք մտածմունք—համոզուած լինելու որ կաթը կեղծած չէ և թարմ է. այծերի բերանները կապած է, որպէս զի իրանց գլխէից դուրս չգան:

Քաղաքի շէնքերի մէջ առաջին տեղը բռնում է, ինչպէս միշտ, կաթուղիկէն. նա սկսուած է 1529 թ. և 1560 վերջացրած Դոն Դիէգօյ Սիլոյէի (d. Diego Siloe) նախագծով: Այս անգամ շէնքը վերածննդութեան ոճով է. առաջ ճակատի երեք դռները զարդարուած են Ալոնսօյ Կանոյի քանդակներով, մէջը, ի միջի այլոց կան նաև Մուրիլլոյի մի քանի պատկերները. իսկ Րիբէրայի սուրբ Աերոնիմոսի իսկական լինելուն չեմ հաւատում. որովհետև պատկերը բաւական զօրեղ չէ և բացի դրանից, որչափ որ ինձ յայտնի է, այդ պատկերի իսկականը գտնվում է Մադրիդի թանգարանում: Կաթուղիկէի հարաւային կողմից կպած է «արքունի մատուռը» (Capilla real) հրաշալի գոթական ոճով շինած, որոյ մէջ թաղուած են Ֆերդինանդ և Իսաբէլյայ կաթոլիկները: Մատուռի մէջ տեղը մի կողմից բռնում է այդ երկուսի մարմարէ գերեզմանները որոնց վրայ արքունի զոյգը ձևացրած է պառկած մահուան անկողնի վերայ թագ ու ծիրանիով, իսկ միւս կողմից նրանց դուստր Յովհաննայի իւր ամուսնու Ֆիլիպպոսի գեղեցիկի հետ նոյն դիրքով: շրջան էլ Կարրարայի մարմարից են շինած իսկ երկու առաջինները մինչև անգամ Իտալիայում:

Մնացեալ եկեղեցիներից շատերը շինուած են պլատերիսկ (plateresco) ոճով—այդ ոճը միմիայն Սպանիայումն է պատահում դա գոթականին և վերածնութեան մի տեսակ խառնուրդն է: Յետոյ մաւրական ազդեցութեան տակ զարգացել է այստեղ մի այլ ոճ ևս, որ կոչվում է Մուդէխար (Mudejar) այդ անունը կրում էին այստեղ, քրիստոնեաների հարկատու արաբները, որոնք, իբրև հմուտ ճարտարապետների, յանձնվում էին նաև եկեղեցիների շէնքը և, որոնք իրանց սովորած էին զգում մաւրական ոճը ձևափոխել քրիստոնէական տաճարի պահանջների համեմատ: Բացի այդ ոճերից, Սպանիայում տասնութերորդ դարում զարգացել է մի այլ ոճ ևս, որ Չուրրիգէրայ (Churriguera) է կոչվում, նրա հնարող ճարտարապետի անունով. դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ վերածնութեան ոճի աղաւաղումը—ապա ուրեմն սպանիական բա-

րով. դրա ամենաընտրոյշ օրինակը այստեղի Քարթուզեայ (Cartuja=Chartreuse) կոչուած վանքն է։

Քաղաքի արուարձաններից մէկը, որ հարաւային մասումն է գտնվում, կոչվում է Ալբայսին. Նրան կպած է չինգաների Թաղը, սարի մէջ փորուած այրերով, որոնց մէջ բնակվում են այդ բոշաները։

Քաղաքի արեւելեան կողմում, լեռան վրայ բարձրանում է Ալհամբրան մի արծուի բոյնի պէս. դա մի պալատ է մաւրական ոճով շինած, որոյ չուրջը ամուր քարէ պարիսպով է պատած ու աշտարակներով ամրացրած, ասես մի բերդ լինի։ Գլխաւոր մեծ փողոցից ծռվում ես մի նեղ սարը բարձրացող փողոց, որ տանում է դէպի ալհամբրայի պարիսպը. այստեղ մի դուռ է բացած արդէն սպանիական ոճով. այդ դռնից որ ներս ես մտնում, առաջիդ բացվում է մի հրաշալի անտառ այնքան խիտ ծառերով որ երկինքը չէ երեւում. գեղեցիկ մաքուր ճանապարհի երկու կողմից, գլուխ կկլոյով հոսում են առուակներ ամենայստակ ջրով. մի քիչ յետոյ ձախ ձեռքիդ վրայ բացվում է Կարլոս հինգերորդի շինած պալատը չուրիգերայ ոճով. այդ պալատի մուտքը անցնելուց յետոյ ծռվում ես դէպի ձախ ու կանգ ես առնում մի մեծ դարբասի առաջ. դա արդարադատութեան դուռն է (Paerta de Justicia) և Ալհամբրայի մուտքը։ Դռանը կամարի վրայ դրսից փորած է Ալլի աջը իսկ ներսից բանալին արդարութեան։ Այդ դռնից մտնում է մարդ մի ընդարձակ գաւիթ որ կոչվում է «plaza de los Alqebes» ջրհորների հրապարակ. այդպէս է կոչվում որովհետեւ այստեղ գտնվում են սառը ջրի պարունակող հորեր ձախ ձեռքիդ բարձրանում է Ալկասաբայ կոչուած աշտարակը, իր դանդաղատով. առաջիդ բացվում է մի հրաշալի տեսարան դէպի Վէգան. այստեղից երեւում է ոչ միայն Սիէրրայ Նէվադայի սպիտակ գլուխը— այլ նաև 26 կիլոմետր հեռաւորութեամբ գտնուող Լոխայ քաղաքը։ Զանգակատան ներքեւ, մարդու հասակի բարձրութեամբ գտնուող մարմարէ տախտակի վրայ արձանագրուած է, որ «Յունուարի երկուսին հազար չորս հարիւր իննսուն երկուսին եօթ հարիւր եօթանասուն և եօթը տարուայ տառապանքից յետոյ այստեղ առաջին անգամ, շողշողաց քրիստոնէական դրօշակը»։ Զանգի ձայնը խաղաղ գիշերները, հասնում է մինչև 56 կիլոմէտր հեռու Լոխան։

Այս աշտարակի հանդէպն է գտնվում խալիֆայի պալատի մուտքը. Նախ և առաջ մտնում ես մի նեղ ու երկար աւազանով գաւիթ, որոյ սիւնազարդ պատերը փորագրուած են նուրբ արաբական օրինակով. այդ գաւիթը կոչվում է «Patio de la Alberca» Ալբերկայի գաւիթ. Նրանից ձախ մի սանդուխք բարձրացնում է դէպի մզկիթը, դժբախտաբար այստեղ ևս սպանիական մոլեռանդութիւնը մեղանչել է գեղարուեստի դէմ, մզկիթը մատուռ դարձնելով, որոյ համար հարկաւորել է, Կարլոս հինգերորդի ժամանակույ չուրիգերայ ոճը խառնել. այդ ոճը արաբականի դէմ այնքան կոպիտ է, որ նրա հետ ամենևին չէ կպչվում, ուստի և սխալակ թելով կարկատածի տպաւորութիւն է անում։ Մզկիթի պատուհանները դուրս են գալիս մի գեղեցիկ բակ, որտեղից, արաբների ժամանակ, Թագաւորը ժողովրդեան էր երեւում։ Այստեղից մի ստորերկրայ ճանապարհ տանում է դէպի արքունի բաղնիսները, որոնք բոլորովին նման են արեւելեան համամների, միայն շատ շքեղ շինած և մարմարէ աւազաններով և չինիի մոզայքով զարդարուած։

Մի նեղ անցքով վերադառնում ես դարձեալ Ալբէրկայ բակը. Նրա միւս ծայրում գտնվում է հռչակաւոր «Առիւծների գաւիթը» որոյ չուրջը շարուած են սիւնազարդ սրահներ. իսկ մէջ տեղում կանգնած է այն գեղեցիկ միակտոր մարմարից փորուած, առիւծներով շրջապատուած, որից գաւիթը իր անունն է ստացել։ Աղբիւրի չուրջը գտնուող, սրահների թւումն են «Աբէնսէրաջների» կոչուած դահլիճը. Նորա մէջ տեղը գտնուող աւազանի մէջ 36 Աբէնսէրաջներ են գլխատուած. դա մի արաբական ցեղ էր, որ Գրանադայի գահի վրայ աչք ունէր ուստի և Սէգրիս Թագաւորը նրանց բոլորին գլխատել է տալ այս աւազանի մէջ։ Մարմարի կարմիր երակները մինչև հիմայ արեան հետքեր են համարվում։ Այդ սրահի հանդէպ նոյն չափով և համաչափ թէ նոյն ձեւով շինուած, «Երկու Քոյր» սրահն է գտնվում, որ ինչպէս ասում են, իր անունը ստացել է, յատակի մէջ գտնուող, երկու միատեսակ մարմարի սալաքարերից։ Գաւիթի արեւելեան կողմում բացվում է մի շատ գարդալուն, գեղեցիկ, բաց սրահ, որտեղ արքայական դատարանն է եղել. այդ սրահի մէջ առաջի պատարագն է տեղի ունեցել, քաղաքը արաբներից ազատելուց յետոյ։

Ալբէրկայ բակի հիւսիսային կողմում գտնվում է բարձր, հոյակապ, երկու շարք պատուհան ունեցող դահլիճը, որտեղ հնում դեսպաններ են ընդունելիս եղել. դա «Sala de Embujadores» դահլիճն է։

Այստեղից սկսվում են պալատի բնակութեան բաժինները, դոքա փոքրիկ սենեակներ են շատ գեղեցիկ պատշգամբներով, որտեղից գիւթիչ տեսարաններ են բացվում դէպի բոլորովին տակը գտնուող քաղաքը իւր շրջականներով։

Բացի այդ Ալհամբրայի պալատից, նրա հանդէպ գտնուող բլուրի վրայ ճոխ պարտեզների միջից հազիւ հազ երեւում է մի այլ պալատ, որ «Ջէնէրալիֆ» է կոչվում և արաբական Թագաւորների ամառանոցն է եղել. դժբաղդաբար այդ պալատի պատերը այնպիսի մի բարբարոսական ծեփով են ծածկուած, որ նուրբ օրինակներ բոլորովին կորել են. միայն վերջին ժամանակներս սկսել են նոյսա վերաշինութիւնը։

Գրանադայ գաւառի արեւմտեան մասը որ կոչվում է Րոնդայ (Ronda) դարման նալի մեղմ կլիմայ ունի. ծովի քամիները այստեղ հասնելով կորչում են կիրճ արեւի տաքութիւնը։ Սիէրրայ Նէվադայի հարաւային մասումն են գտնվում Խոպանական Ալժէքը, որ յայտնի են Ալպուխարրայ անունով (Las Alpujarras)։ Այդ երկրի բնակիչները ժամանակին հռչակաւոր աւազակներ էին. այժմ յայտնի լթիներ են և պարապում են մեծ մասամբ մաքսանենգութեամբ կամ ցլամարտով. բոլոր սպանիական յեղափոխութիւնները միշտ դոքա են սկսել այն յուսով, որ անկարգութիւնից օգուտ քաղելով իրանց, նիւթական շահերը հոգան։ Ընդհանրապէս այս գաւառի բնակիչների անգործութիւնը չափազանց աչքի է ընկնում. փողոցները լեցուած են «արեւում տաքացողներով»։ Այդ անգործութիւնն է պատճառը, որ այստեղ այդչափ զարգացած է մուրացկանութիւնը. Նէապոլի մուրացկանները Եւրոպայում յայտնի են իբրև ամենաանբեռ մարդիկը. բայց այստեղ եկողը նապոլեցիներին կմոռանայ։ Տէր Աստուած, որտեղից են հաւաքվում այդքան անտէր, անձեռ, անքիթ մարդիկ, այդքան իղձատներ, կոյրեր, անդամալոյծներ... ոչ մէկ աշխարհում այդ քանակութեամբ մուրացկան չէ կարող գտնուել. ինձ թվում է, որ ամեն տասից իննը մուրացկան է. մարդ չէ կարող հինգ քայլ անել, առանց մեկ մուրացկանի հանդիպելու։ Եթէ մի մարդու երես մի քիչ նայես, իսկոյն ձեռքը կերկարացնէ. շատ անյարմար բան է ինձպէս մանողխառութիւն ունեցողի համար։

Բայց այդ անյարմարութիւնը եթէ չլինէր, գուցէ ոչ մի սպանիացի արքայութեան աչք չունենար—չէ որ վարդը փուշ էլ պիտի ունենայ։

Ոչ մէկ քաղաքից, կեանքումս, այնքան մեծ սրտի ցաւով չեմ հեռացել, ինչպէս Գրանադայից։

Վարդգէս Սուրէնեան։

* * *

ՔԱՂԱՔՈՒՄ

Յունուարի 11-ի գիշերը Թիֆլիզում, երկաթուղու կայարանի մօտ երեք վրացի աւազակներ յարձակուեցին Ն. Սուլխանովի խանութի վրայ և կողոպտելով խանութի դրամարկղը, միենոյն ժամանակ սպանեցին երկու տղամարդու և մի կին. Սուլխանովի խանութը գտնվում է երկաթուղու Թիֆլիզի կայարանի դիմացը, Նախալովկայ կոչուած Թաղում. ուստի շատ զարմանալի է աւազակների յանդգնութիւնը և ցոյց տուած անօրինակ գազանութիւնը։ Սուլխանովը նկատելով որ իւր չունը հաչում է դուրս եկաւ և տեսաւ որ երեք հոգի խոսակցում են իւր խանութի առաջ, փաթաթուած բաշլըղներով։ Յանկարծ նրանցից մէկն ուղղեց հրացանը դէպի Սուլխանովը որ փախաւ յետ և մտաւ խանութը. Նրա ետևից մտան աւազակները և վերցրին դրամարկղը, որի մէջ կար ընդամէնը 4 ռուբլի։ Այդ միջոցին դուրս եկաւ տանտէր Տէր-Յակովբեանը 25 տարեկան մի երիտասարդ ու նկատելով աւազակներին, երբ ուզում էր փախչել, աւազակներից մէկը գնդակահար արաւ նրան։ Վիրաւորուածը կարողացաւ մի կերպ տուն հասնել։ Աւազակների ձայնից դուրս եկաւ իւր բնակարանից երկաթուղու ժանդարմի կին Օգերովան և աւազակները նրան ևս գնդակահար արին. խեղճ կինը մեռաւ, գնա. հիւանդանոց չհասած։ Կայարանի կառավարիչը լսելով աղմուկը, վազեց մի քանի ծառայողների հետ, որոնց մէջ էր և երկաթուղու ժանդարմ Բելոգէրով. աւազակները վերջինիս նոյնպէս գնդակահար արին և տեղն ու տեղը գլորեցին գետին։

Աւազակներից երկուսը բռնուած են և երկուսն էլ վրացիք են. երկուսն էլ Քութայիսի նահանգից Պլատէ և Լուկա Պուչուլիձէ. իսկ երրորդն աներևոյթացել է։

Մարդասպանները պնդում են թէ իրանք հարբած են եղել և ոչինչ չեն յիշում...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ. —«Mémorial Diplomatique» լրագիրը հաղորդում է, որ այս օրերը, սուլթանի հրամանով, զգուշութեան խիստ միջոցներ են դիմել, որովհետև Եըլդըզ Կէօշկում տեղեկութիւններ էին ստացել, որ մի մեծ դաւադրութիւն է կազմուած սուլթանին սպանելու համար։

ՖՐԱՆՍԻԱ.—«Rappel», «Aurore» և «Voltaire» թերթերը մեղադրում են կառավարութեան, որ ծածկում է ճշմարտութիւնը և արհեստական կերպով բուլանժականութիւն վերածննեցնում։ Լուր է պտտում որ Մելինի կաբինետը հրաժարական է տալիս։

Ֆլօրէնցիայից հաղորդում են, որ յայտնի գիտնական Լօմբրօզօն մի միջազգային ցոյց է կազմելու ի պատիւ Էմիլ Զօլայի։

Յունվ. 3-ին (15) Նէապոլի իտալացիները Էմիլ Զօլային ուղղեցին մի ոգևորուած շնորհաւորական հեռագիր նրա՝ Դրէյֆուսի մասին գրած բաց նամակի վերաբերութեամբ։

Բյօրնսօն յայտնի վիպասան և դրամատուրգ հեղինակը ուղարկել է մի հեռագիր Էմիլ Զօլային, որի մէջ նա շնորհաւորում է այն առնական քաջութիւնը, որով Զօլան դիմել է յանուն ճշմարիտ գործի և որ այդ ծառայութիւնը համամարդկային է։

Նոյնպէս ուղերձ ուղարկել է Զօլային բէլգիական համալսարանական մարմինը։ Նոյնանման մի ցոյց պատրաստվում է Բուդապէշտումն ևս։

ԵԳԻՊՏՈՍ. — «Temps» լրագրի Կայիրէի թղթակիցը առաջ է բերում Եգիպտոսում կատարած վերջին վիճակագրութեան վերաբերեալ մի քանի թուանշաններ։ Եգիպտոսի ազգաբնակութիւնը որ 1882-ին 6,814,000 էր հասել է 1897-ին 9,734,000 մարդու։ Ազգաբնակութեան խտութիւնը միանգամայն արտակարգ երևոյթ է ներկայացնում. մի քառակուսի կիլօմետրի վրայ բնակվում են 293 հոգի։ Եգիպտոսը ուրեմն այս կողմից գերազանց է նոյն իսկ Բելգիայից, որ մինչև այժմ ամենախիտ բնակչութիւնը ունեցող երկիրն էր համարվում և ուր մի քառակ. կիլօմետրի վրայ 207 մարդ են բնակվում։

Եգիպտոսի մօտ 10 միլիոն բնակիչներից եւրոպացիների թիւը ընդամենը 112,000 է։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունվարի 10-ից

ԱԼԺԻՐ. – Եզերների մի զօրագունդ սրերը մերկացրած հալածեց ամբոխը որ աղաղակում էր «կորչին հրէաները»։ ամբոխը կոտրատեց հրէաների խանութները և ապրանքները դուրս թափեց փողոց. ամբոխը հալածուելուց յետոյ կրկին համախմբուեց և բռնեց աղաղակել «կէցցէ զօրքը»։ Դաշոյնից և ռէզվոլվէրների գնդակներից շատ վիրաւորուածներ կան։ Անկարգութիւնները շարունակվում են, սպանուած է մի հոգի, երկու զաւակների հայր։

Վրդովմունքը հասել է ծայրայեղ աստիճանի. փողոցները ամբոխով և զինուորներով լիքն են։ Վիրաւորուածներից մէկը մի ոմն Կապրօլ մեռաւ դեղատանը, շատերը դաշոյնի սոսկալի վէրքեր են ստացել. երբ ժամը 4-ին Կապրօլի սպանուելու լուրը տարածուեց, սոսկալի խառովութիւն առաջացաւ. իսկոյն քարուքանդ արին հրէական 6 խանութներ, ապրանքները մասամբ կողոպտեցին, մասամբ այրեցին։ Հեծեալ զօրքը յարձակուեց գործեց ամբոխի վրայ։ Ամբոխը դիմադրում է. Ժանդարմերիան և ոստիկանութիւնը չեն կարողանում կարգը վերականգնել. զանազան ազգութեանց պատկանող Թափառաշրջիկները վերսկըսում են կողոպուտը։ Մի քանի ոստիկաններ ստանակոխ եղան։ Զերբակալում են ապրանքներ գողացողներին։

Ժամը $10\frac{1}{2}$-ին խռովարարները կրկին յարձակուեցին հրէական խանութների վրայ. ալիւրի մի շտեմարանից պարկերը թափում էին և պատառոտում, զօրքը սուիններով յարձակուեց ամբոխի վրայ և շատերը վիրաւորուած են. ցոյց անողները կրկին ժողովուեցին ծովափը և այրեցին հրէաներին պատկանած օղիի պահեստները. զինուորները վազում են այնտեղ. հրդեհը յաջողվում է հանգցնել։ Հեծեալ զինուորները պտտում են քաղաքում, ուր հանգստութիւնն սկսում է վերականգնել։ Ցոյց անողները գնում են դէպի Սէնտ-Եօժէն Թաղը և վնասում հրէաներին պատկանած տներին և ժանդարմերիան արգելեց նրանց կրկին քաղաք վերադառնալ։ Քաղաքը հանդարտուած է. զինուորները վերադառնում են իրանց բնակարանները. բանտարկեցին 200 հոգի։

Յունվարի 11-ից

ՓԱՐԻԶ. — Օրուայ ընթացքում շատ ձերբակալութիւններ տեղի ունեցան։ Ուսանողների ցոյցերը շարունակվում են։ Րուանի մէջ ուսանողութիւնը յարձակուեց ուսանողների վրայ, բայց չկարողացաւ ցրուել։ Զօրքը զինուորանոցների մէջ պատրաստ սպասում է։

ՆԱՆՍԻ. — Ցոյցերը շարունակվում են. շատ ձերբակալութիւններ են լինում։ Զինուորական հանդիսի ժամանակ աղաղակներ լսուեցին «կեցցէ զօրքը» և «ի բաց Դրէյֆուսին»։ 200 ուսանողներ միացան քաղաքից դուրս, վճռեցին հակահրէական կոմիտէ հիմնել և շնորհաւորական հեռագիրներ ուղղել Րօշֆօրին և Դրիւմօնին։

Յունվարի 12-ից

ԳՐՕԶՆԻՑ.—«Ուսպեխ» անունով նաւթային արդիւնաբերութեան գործարանում վառվում են երկու ըէզէրվուարներ, 20,000 փութ։ Հրդեհը շարունակվում է։

ԶԱՆԱԶԱՆ

Աշխարհի չուրջը 33 օրում.—Պ. Էմիլ Գոթիէն „La Croix de Lorrain" հանդէսում ներկայացնում է մի հետաքրքրական հաշիւ թէ սիբերական մեծ երկաթուղու կառուցանելուց կարելի է 33 օրում ճանապարհորդութիւն կատարել աշխարհի չուրջը։

Ահա նրա հաշիւը.

1) Բրեմէնից—Պետերբուրգ $1\frac{1}{2}$ օր երկաթուղով.
2) Պետերբուրգից—Վլադիվաստոկ 10 օր երկ.
3) Վլադիվոստօկից—Ս. Ֆրանցիսկօ 10 օր շոգ.
4) Ս. Ֆրանցիսկօից—Նիւ-Եօրկ $4\frac{1}{2}$ օր երկաթ.
5) Նիւ-Եօրկից—Բրեմէն 7 օր շոգենաւով։

Ընդամենը ճիշդ 33 օր։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռական հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարգային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԹՈՒԴԵՆԿՕ—$10\frac{1}{2}$—$11\frac{1}{2}$ ժ. կանանց և երեխայոց։

Զ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ.—$11\frac{1}{2}$—12 ժ. կանանց հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի. քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—$1\frac{1}{2}$—$2\frac{1}{2}$ ժ. ներքին և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—$6\frac{1}{2}$։

Ա.Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ.նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խուզարկուական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Մշտական մահճակալների բաժնով
ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ
(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԳԵՋԵՆԿՈՑԻ)
Սօլօլակ, Դանովսկայա փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 միզային օրգանների վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Ս. Ա. ՇԱՆԵԱՎՍԿԻ, ժամը 1—2 վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ օրերը):

Կին-բժիշկ Կ. Ե. ԿԱՐԳՈՎԻՉ, 12—1 մանկաբարձական և կանանց հիւանդութեանց, (երեքշ. հինգշ. և շաբաթ օրերը):

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն։

Ս. Լ. ԲԵՆԿԼԵՎՍԿԻՑ 12—1. ականջի, քթի, կոկորդի և վիրաբուժական հիւանդութեանց։

Ս. Բ ԳՐԵՏՑԻՆԳԵՐ $12\frac{1}{2}$—$1\frac{1}{2}$, մասսաժ և բժշկական մարմնամարզութիւն, բժիշկների որոշմամբ (երկուշ. չորեք. ուրբաթ) վճար փոխադարձ համաձայնութեամբ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց

Գ. Ա. ՔՕԶԱՐԵԱՆՑ ժամը 11—12, կաշուի, վեներական, սիֆիլիսի և մէզային օրգանների հիւանդութեանց երեքշ. հինգշ. և շաբաթ)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը, 1—2 ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (երեքշ. չորեքշ. և ուրբաթ օրերը):

Ատամնաբոյժ Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 11—12, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը **50** կ.

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, ելեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ այսու յայտարարում է թէ այն անձինք որոնք կցանկանան կապալով վերցնել Թիֆլիզում թափառական շներին կոտորելը և նրանց դիակները ժողովելը, տեղեկութիւններ և պայմաններ իմանալու և յայտարարութիւն տալու համար կարող են դիմել վարչութեան դիւանին ամեն լի օր առաւօտեան ժամը 9-ից մինչև ժամը 2-ը, կէսօրից յետոյ։ (3—1)

Լոյս տեսաւ
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ
դասագիրքը. հատոր չորրորդ։
(5—1) Սահակ քահ. Սահակեանց։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼՈՒՄԱՅ
ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)
1898 թ. առաջին գիրքը։
Տարեկան բաժանորդագինը **3** ռ.։
Հրատարակիչ՝
Գիւտ ա. ք. Աղանեանց։

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie"

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ."

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի $^{25}/_{6}$-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 21/2 փետրվ. ՍԻՐԿԱՍԻ շոգենաւ նաւապետ է ԳԱՐՐԻԳ

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնոյա։
Թիֆլիզում.—Պ. Օ. Դ. Բաբեկնդանեանին, Օրոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։
Բագւում.—Պ. Ս. Դիլղարեանին, Կոլիւբակինի հրապարակ։
Նովօրօսիյսկում.—պ. Մելխիօր Հերշենրօդերին։ (20—12)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած պէտքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի խտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերպասի գործարանական հաշուետուութեան։
բ) Առևտրական թուաբանութիւն։
գ) Առևտրական նամակագրութիւն։
դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքներն սկսուելու են յունվարի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգէեվսկի փողոց, տուն Լիսիցեվի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—6)